ԳԼՈԲՈՒՍ

Հրատարակվում է
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ աջակցությամբ

1 (80)

ԵՐԵՎԱՆ

2017

ԳԼՈԲՈՒՍ

Թիվ 1 (80), 2017

«ԳԼՈԲՈՒՍ» ՏԵՂԵԿԱԳՐԻ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Աշոտ Թավադյան
ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր

Աշոտ Թևիկյան
ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների և Ռուս-հայկական (սլավոնական) համալսարանի կառավարման ամբիոնների դասախոս, տ.գ.թ.

Գագիկ Հարությունյան (համակարգող)
«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն, ք.գ.թ.

Էդուարդ Լ.Դանիելյան
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հին դարերի պատմության բաժնի վարիչ, պ.գ.դ.

Կարեն Վ.Կարապետյան
ՀՀ վարչապետ, տնտեսագիտության դոկտոր

Մուշեղ Լալայան
ՀՀԿ փոխնախագահ

Սամվել Մանուկյան
IPSC Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի վերլուծաբան, ս.գ.թ.

Վահագն Ագլյան
«Նորավանք» ԳԿՀ խորհրդական, ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Հանրային կառավարման ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ

Վարդան Հարությունյան
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահ, տ.գ.թ.

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր
Գագիկ Հարությունյան

Գլխավոր խմբագրի տեղակալ
Վահագն Ագլյան

Պատասխանատու խմբագիր
Խոնարհիկ Քարաուղլանյան

Պատասխանատու քարտուղար
Լուսինե Բաղրամյան

Խմբագիրներ
Արեստակես Սիմավորյան
Դիանա Գալստյան
Կարեն Վերանյան
Վահրամ Հովյան

Էջադրող-ձևավորող
Տաթևիկ Քարաուղլանյան

ԳԼՈԲՈՒՍ

Թիվ 1 (80), 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կարեն Վերանյան
«Մարդկային կապիտալը»՝ քաղաքական-տնտեսական զարգացման նախադրյալ 5

Յուրի Գրոմիկո
Եվս մեկ անգամ զարգացման օրակարգի մասին 12

Գագիկ Հարությունյան
Հեղափոխական և հետհեղափոխական ժամանակաշրջանի
տեղեկատվական քաղաքականությունը Ռուսաստանում 19

Գագիկ Տերտերյան
Հետպատերազմյան տեղեկատվական քաղաքականությունը ԽՍՀՄ-ում 26

Սամվել Մարտիրոսյան
Հայաստանի հասարակությունը և կիբեռանվտանգությունը. իրավիճակը 2016թ. 34

Դավիթ Սարկիսյան
ԼՂՀ հակամարտության գոտում
հրադադարի խախտման վիճակագրական ակնարկ 38

Գեորգի Կոլարով
Բուլղարիան փոխում է աշխարհաքաղաքական կողմնորոշումը 45

Վահրամ Հովյան
Պետականակենտրոնությունը՝ հայրենիք-սփյուռք միասնականության առանցք 53

Կարեն Վերանյան
Ձախողված երկրների ինդեսքը 2010-2016թթ. 60

Հուշագիր հեղինակին 69

«ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԸ»՝ ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼ

Կարեն Վերանյան*

Մարդկային կապիտալը (*human capital*) հասարակության մտավոր, ֆիզիկական, բնական, առողջապահական և այլ ռեսուրսների հավաքական ամբողջությունն է, որը տվյալ հասարակության բարեկեցության ապահովման, երկրի տնտեսության զարգացման անկյունաքարն է: Յուրաքանչյուր պետության մարդկային ռեսուրսների առկայությունը հնարավորությունների լայն դաշտ է ապահովում երկրի կայուն զարգացման համար: Ազգաբնակչության բարեկեցության ապահովման տեսանկյունից, թերևս, էական նշանակություն չունեն առկա մարդկային ռեսուրսների քանակական ծավալները: Մեր օրերում քիչ չեն այն ազգերն ու պետությունները, որոնք տիրապետում են թվաքանակով մեծ մարդկային ռեսուրսների, այնուհանդերձ, օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներից ելնելով ոչ միայն չեն կարողացել արդյունավետ օգտագործել այդ արժեքավոր ռեսուրսները, այլև ռեսուրսների անարդյունավետ կառավարման հետևանքով երկիրը կանգնել է տնտեսական և քաղաքական լրջագույն հիմնախնդիրների առջև: Նշենք, սակայն, որ նախ տվյալ հասարակությունից և նրա քաղաքական վերնախավից է կախված մարդկային կապիտալի (այսուհետ՝ ՄԿ) ձևավորման, կուտակման և թիրախավորված կիրառության արդյունավետությունը: Կրթության, գիտության ոլորտում անհրաժեշտ և համարժեք թիրախավորված և հետևողական ներդրումների իրագործման հարցում պետության և հասարակության փոխհամաձայնության արդյունքում մշակված ռազմավարությունը հնարավորություն է տալիս առկա ՄԿ կիրառությունից ակնկալել որակական հետադարձ արդյունք:

Մարդկային կապիտալի տեսությունները

Առաջին անգամ «մարդկային կապիտալ» եզրը կիրառել է ամերիկացի տնտեսագետ Թեոդոր Շուլցը 1961թ.: Նա իր տեսությունում առաջ էր մղում *կրթական կապիտալի*՝ որպես ՄԿ առանցքային բաղադրիչի, կարևորությունը երկ-

* «Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի ղեկավար:

րի տնտեսության զարգացման գործում: Շուլցի շնորհիվ ՄԿ-ը առհասարակ դիտվեց որպես հիմնաքար հասարակության բարեկեցության ապահովման համատեքստում: Ամերիկացի տնտեսագետը հետազոտություններ էր իրականացնում՝ պարզելու հետպատերազմյան շրջանում (Երկրորդ աշխարհամարտից հետո) Գերմանիայի և Ճապոնիայի տնտեսության արագ վերականգնման պատճառահետևանքային կապերը (ի դեպ, նշյալ երկրների տնտեսական աճի տեմպերը գերազանցում էին Երկրորդ աշխարհամարտում հաղթանակած Մեծ Բրիտանիայի տնտեսական ցուցանիշները): Նա եկավ այն եզրահանգման, որ Գերմանիայի և Ճապոնիայի տնտեսությունների արագ վերականգնման հանգամանքը պայմանավորված էր կրթված և առողջ բնակչություն ունենալու իրողությամբ, քանի որ, ըստ նրա հետազոտության, կրթությունը մարդկանց դարձնում է առավել արտադրողական և ստեղծագործ: Թ.Շուլցի առաջարկած ՄԿ տեսությունում անկյունաքարային էր համարվում անհատի և հասարակության անհրաժեշտ կրթվածության հանգամանքը, որը ՄԿ կուտակման և զարգացման կարևոր նախապայմանն էր: 1960թ. «Քաղաքական տնտեսության հարցեր» ամսագրում տպագրված «Կապիտալի ստեղծումը կրթության շնորհիվ» (*Capital Formation by Education*) հոդվածում տնտեսագետը ներկայացնում էր աշխատուժի արժեքի վերաբերյալ իր գնահատականները, որտեղ հաշվարկվում էին կրթության համար նախատեսվող ծախսերը[1]:

Ամերիկացի տնտեսագետ Գարի Բեքերը 1960-ականներին զարգացրեց ՄԿ-ի վերաբերյալ Շուլցի տեսության հիմնադրույթները՝ հասարակության կենսամակարդակի բարձրացման գործում հիմնավորելով ՄԿ-ում ներդրումների անհրաժեշտությունը: 1962թ. լույս տեսավ Բեքերի «Ներդրումները մարդկային կապիտալում. տեսական վերլուծություն» հոդվածը, իսկ 1964թ. նա գրեց «Մարդկային կապիտալ. տեսական և էմպիրիկ վերլուծություն» գիրքը, որտեղ կարևորում էր կրթական կապիտալի բաղադրիչը: Բեքերը ԱՄՆ օրինակով հաստատում էր, որ Միացյալ Նահանգներում ներդրումները ՄԿ-ում կարող են ապահովել եկամտաբերության առավել բարձր ցուցանիշներ, քան դա կարելի է ակնկալել արժեթղթերում իրականացվող ներդրումներից[2]: Բեքերն առաջինն իրականացրեց կրթության՝ որպես ՄԿ կարևորագույն բաղադրիչի տնտեսական արդյունավետության ճշգրիտ հաշվարկը: Ըստ նրա տեսության, ՄԿ հաշվարկում ՄԿ կրթական բաղադրիչն առանձնացվում էր

[1] http://efbgu.narod.ru/stud/files/ebook/nobel/17_schultz.pdf
[2] http://seinst.ru/page289/

որպես անկյունաքարային դրույթ գործարարության արդյունավետության ապահովման տեսանկյունից՝ ընդգծելով տվյալ ձեռնարկության զարգացման համար յուրաքանչյուր աշխատակցի կրթության և մասնագիտական ուսուցման համար ներդրումների իրականացման անհրաժեշտությունը: Բեքերն առանձնահատուկ նշանակություն էր տալիս աշխատակիցների ուսուցմանը, անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների ձևավորմանը, որոնք հնարավորություն են տալիս ապահովել ընկերության մրցունակությունը շուկայական հարաբերություններում: Տնտեսագետի գնահատականներով, կրթությունը թե՛ վարձու աշխատողների, թե՛ գործատուների եկամուտների աճի անհրաժեշտ հիմնասյունն է: Արդյունքում՝ քաղաքական վերնախավերից շատերը, հայտնի ֆինանսիստները ՄԿ կրթության բաղադրիչում ներդրումների իրագործման հարցը սկսեցին դիտարկել որպես եկամտաբեր, հեռանկարային երկարաժամկետ ներդրում[3]:

Մարդու կրթության, առողջապահության և առհասարակ բարեկեցության հարցերում ՄԿ տեսության ունեցած մեծ ավանդի համար Շուլցը (1979թ.) և Բեքերը (1992թ.) արժանացել են Նոբելյան մրցանակների:

Անհատական և ազգային ՄԿ

ՄԿ տեսության մեջ առանձնացվում է ՄԿ երկու հիմնական տեսակ՝ *անհատական մարդկային կապիտալ* և *ազգային մարդկային կապիտալ*: 1970-80-ականներից սկսած՝ շեշտակի տեմպերով տեղի ունեցող արդյունաբերականացման գործընթացները, որտեղ մարդկային ռեսուրսների հարցում առաջնային էին համարվում բնական, ֆինանսական և նյութական ասպեկտները, անցան որակապես ավելի բարձր աստիճանի՝ մարդկային ռեսուրսներում առանցքային նշանակություն տալով կրթությանը և տեղեկատվությանը[4]: Հետագայում ՄԿ հասկացության ձևակերպման շրջանակներն ավելի ընդլայնվեցին: Համաշխարհային բանկի փորձագետների վերջին զեկույցներում ՄԿ գնահատման հաշվարկները հիմնվում են այնպիսի չափորոշիչների վրա, ինչպիսիք են սննդի, բնակավայրի, կրթության, առողջապահության ուղղությամբ ընտանեկան և պետական ծախսերը:

Համաշխարհային գլոբալացման համընդհանուր գործընթացների պայմաններում, երբ յուրաքանչյուր պետություն բախվում է երկրից ՄԿ և առա-

[3] https://www.hse.ru/data/2011/04/22/1210713272/Korchagin%20Russian%20Human%20Capital%20Assets.pdf
[4] http://gtmarket.ru/files/article/5282/Human_Capital_The_Content_and_Types_Evaluation_and_Stimulation.pdf

ջին հերթին՝ նրա մտավոր կամ այսպես կոչված «ուղեղների» արտահոսքին, հասարակության բարեկեցության ապահովման տեսանկյունից ավելի էական են դառնում ՄԿ պահպանման և կուտակման, զարգացման և այդ ուղղությամբ ներդրումների իրականացման հարցերը: ՄԿ տեսության կիրառությունը լայն տարածում գտավ այն ժամանակ, երբ ի հայտ եկավ անհատի և նրա մտավոր, գիտակրթական պոտենցիալի դերի ու նշանակության կարևորման հիմնահարցը հասարակության կենսապայմանների բարձրացման համատեքստում: Արդյունքում՝ ՄԿ-ն սկսեց ընկալվել որպես պետության նորարարական և գիտելիքահեն տնտեսության զարգացմանն անհրաժեշտ նախապայման, որտեղ առանձնացվում էր *անհատն իր մտավոր և այլ ռեսուրսներով՝ որպես հասարակության ՄԿ զարգացումն ապահովող կարևորագույն սուբյեկտ*: Այստեղից էլ ՄԿ տեսությունում առաջ եկավ *անհատական ՄԿ* հասկացությունը:

ՄԿ հասկացությունը ներառում է նաև տնտեսական նշանակության բաղադրիչը, որը փոխադարձ կապի մեջ է կրթական կապիտալի հետ: ՄԿ տնտեսական բաղադրիչը սկզբում սահմանափակվում էր անհատի աշխատունակությամբ և աշխատանքի նկատմամբ նրա ունեցած գիտելիքներով: Ընդ որում, անհատի դաստիարակության, կրթության ոլորտում ներդրումները կրում էին սոցիալականացված բնույթ և բնորոշվում էին ոչ թե արտադրական, այլ ծախսային առանձնահատկություններով:

ՄԿ և նրա տնտեսական բաղադրիչի նկատմամբ նախկին մոտեցումները վերիմաստավորվեցին 20-րդ դարի երկրորդ կեսից: Հետագայում պետության տնտեսական աճի ապահովման հետ ՄԿ ուղղակի կապի վերաբերյալ տեսական գիտելիքները զարգացրեց ամերիկացի տնտեսագետ Էդվարդ Դենիսոնը՝ մշակելով տնտեսական աճի գործոնների դասակարգումը: Վերլուծելով 1929-1982թթ. Միացյալ Նահանգների տնտեսական աճի տեմպերը՝ Դենիսոնը եկավ այն եզրահանգման, որ յուրաքանչյուր աշխատակցի հաշվարկով արձանագրված տնտեսական աճի (աշխատանքի արտադրողականություն) համար որոշիչ գործոն է առաջին հերթին կրթությունը: Արդյունքում՝ առավել դինամիկ և կայուն տնտեսական աճ և հասարակության բարձր կենսամակարդակ կարողացան ապահովել այն երկրները, որոնք համաշխարհային գլոբալացման և արտագաղթի համատարած հոսքի պայմաններում ի վիճակի եղան ոչ միայն պահպանել իրենց ՄԿ-ն և առաջին հերթին՝ դրա մտավոր բաղադրիչը, այլև հնարավորություն ապահովեցին որակական-դրական ՄԿ կու-

տակման հարցում: Զարգացող և, առավել ևս՝ զարգացած երկրների ՀՆԱ-ում չորակավորված ՄԿ-ն աստիճանական նվազման միտում ունեցավ՝ տեղը զիջելով ՄԿ ուսյալ, գիտակ և որակավորված հանրությանը: Ներդրումները ՄԿ-ում կարևոր նշանակություն ունեն նաև տվյալ պետության քաղաքական և տնտեսական վերնախավերի ձևավորման գործում. որքան արդյունավետ են իրականացվում ՄԿ ռազմավարական ուղենիշները, այնքան արդյունավետ են ստացվում քաղաքական և տնտեսական վերնախավերի ձևավորման գործընթացն ու պետական կառավարման համակարգի գործունեությունը: ՄԿ կիրառման արդյունավետությունից են կախված տվյալ երկրի տնտեսության մրցունակությունն ու աճը, քանի որ որակյալ մասնագետները ձգտում են աշխատանք գտնել ավելի բարեկեցիկ և անվտանգ երկրներում[5]:

ՄԿ տեսություններում առանձնացվում է նաև *ազգային ՄԿ* հասկացությունը, որը տվյալ պետության, հասարակության ազգային հարստության հիմնական բաղկացուցիչն է: Ազգային ՄԿ-ն ներառում է տվյալ պետության և հասարակության քաղաքական, սոցիալ-տնտեսական կապիտալը, ազգային մտավոր ռեսուրսները, ազգային մրցունակության առավելությունները և ժողովրդի բնական պոտենցիալը: Ազգային ՄԿ-ն հաշվարկվում է նրա արժեքայնության ցուցչով: Անհրաժեշտ է նշել, որ Ազգային ՄԿ-ն կազմում է յուրաքանչյուր զարգացող երկրի ընդհանուր ազգային հարստության ավելի քան կեսը, իսկ զարգացած երկրների համար՝ վերջիններիս ազգային հարստության ավելի քան 70-75%-ը:

Աշխարհի տարբեր երկրների Ազգային ՄԿ արժեքը, ծախսատարության մեթոդաբանության հաշվարկի հիման վրա, գնահատվել է Համաշխարհային բանկի փորձագետների կողմից: Հաշվարկներում օգտագործվում են ՄԿ բաղկացուցիչ մասերի գնահատականները՝ ըստ պետության, ընտանիքի, գործարարների և այլ ծախսերի, որոնք հնարավորություն են տալիս սահմանել ՄԿ վերարտադրմանն ուղղված հասարակության տարեկան ընթացիկ ծախսերը: Փորձագիտական գնահատականների համաձայն, 20-րդ դարի վերջերին ՄԿ համաշխարհային արժեքը հաշվվում էր $365 տրլն, ինչը կազմում էր համաշխարհային հարստության 66%-ը: ԱՄՆ ՄԿ արժեքը կազմում էր $95 տրլն կամ երկրի ազգային հարստության 77%ը, կամ համաշխարհային ՄԿ արժեքի 26%-ը: Չինաստանի ՄԿ արժեքը $25 տրլն էր, որը կազմում էր երկրի ազգա-

[5] http://vadim-galkin.ru/politics/economy/opredeleniya-vidy-tipy-i-struktura-chelovecheskogo-kapitala/

յին հարստության 77%-ը կամ համաշխարհային ՄԿ ընդամենը 7%-ը: Ռուսաստանի ՄԿ արժեքը $30 տրլն էր, ինչը կազմում էր երկրի ազգային հարստության 50%-ը կամ համաշխարհային ՄԿ 8%-ը: Ինչպես նշեցինք, սկզբնական շրջանում ՄԿ-ն համարվում էր զարգացման սոցիալական գործոն կամ ծախսատար գործոն, կրթության ոլորտում ներդրումների իրականացումը համարվում էր ոչ արտադրողական և ծախսատար: Եվ հենց կրթության ու գիտության ոլորտում իրականացվող ներդրումների ծավալների աճի հիման վրա ԱՄՆ-ը և Արևմտյան Եվրոպայի երկրները կարողացան ապահովել ՄԿ որակական առավելություն Ասիայի առաջատար երկրների (օրինակ՝ Չինաստանի կամ Հնդկաստանի) նկատմամբ: Ներկայացնենք Միացյալ Նահանգների և Ռուսաստանի կրթության համար նախատեսված տարեկան բյուջետային հատկացումների ծավալների վիճակագրական համեմատականը: 2014-2015թթ. ԱՄՆ կրթության ծախսերը կազմել են երկրի ՀՆԱ շուրջ 5.4-5.5%-ը: ԱՄՆ ԿՀՎ տվյալների համաձայն, 2015թ. ԱՄՆ ՀՆԱ-ն կազմել է $17.95 տրլն, այն դեպքում, երբ Ռուսաստանը կրթությանը տրամադրում է ՀՆԱ 4-4.1%-ը, իսկ Ռուսաստանի ՀՆԱ-ն 2015թ. կազմում էր $3,7 տրլն: Իսկապես, պետական ֆինանսական հատկացումների ծավալների տարբերությունն զգալի է:

ՄԿ ցածր ցուցանիշների պարագայում բարձր տեխնոլոգիական ոլորտում անհրաժեշտ ներդրումների իրագործումը չի կարող ապահովել հետադարձ դրական արդյունք: Այս պարագայում ՄԿ տեսությունում առանձնացվում է *բացասական ՄԿ* հասկացությունը, երբ ՄԿ ոլորտում իրականացված ներդրումները չեն կարողանում ապահովել ակնկալվող դրական արդյունքներ: Բացասական ՄԿ կուտակման գործում զգալի բացասական ազդեցություն ունեն այնպիսի գործոններ, ինչպիսիք են կոռուպցիան, ստվերային տնտեսությունը, բնակչության ցածր կենսակերպը և այլն: ՄԿ բացասական բաղադրիչի ձևավորման հարցում մեծ է նաև քաղաքական վերնախավի դերը, քանի որ վերջինս է հստակեցնում երկրի զարգացման տեսլականը: Կարևոր հարցերից մեկը վերաբերում է ներդրումների իրագործման հարցում ՄԿ թիրախավորմանը: Բացասական ՄԿ ուղղությամբ իրականացված ներդրումները, երբ փորձ է արվում կրթել այն անհատներին կամ հասարակության այն խմբերին, որոնք ընկալունակ չեն դարի փոփոխությունների նկատմամբ և չեն կարող տալ ակնկալվող կրթական արդյունքներ, ունենում են բացասական և որոշ դեպքերում՝ անդառնալի ազդեցություն Ազգային ՄԿ կուտակման գործընթացում: Մեր օրե-

րում ՄԿ տեսակներից բավական տարածված է այսպես կոչված *պասիվ ՄԿ*-ն, որն անհրաժեշտ ներդրումների պարագայում չի կարող ապահովել ակնկալվող դրական ազդեցությունը երկրի տնտեսության զարգացման կամ հասարակության բարեկեցության ապահովման տեսանկյունից, քանի որ ռեսուրսները վատնում է սեփական նյութական պահանջարկը բավարարելու համար:

Հայաստանի ՄԿ հարցի շուրջ

Հայաստանում ՄԿ հարցի առնչությամբ առկա են ինչպես քանակական, այնպես էլ որակական խնդիրներ: Ինչպես հաստատում են վիճակագրական տվյալները, Հայաստանից մարդկային ռեսուրսների և հատկապես «ուղեղների» կայուն արտահոսքը *կրիտիկական* նշանակություն ունի երկրի անվտանգության տեսանկյունից: Մյուս կողմից, երկիրը կանգնել է բարձրորակ կադրային ռեսուրսների թվաքանակի նվազագույն շեմի ապահովման խնդրի առջև: Ունենալով սահմանափակ մտավոր ՄԿ՝ երկրում տրամաբանորեն շեշտադրումները կատարվում են տնտեսության այնպիսի ճյուղերի զարգացման վրա, որոնք, որպես կանոն, չեն պահանջում մտավոր-ստեղծագործական ռեսուրսներ: Դա են փաստում միջազգային հեղինակավոր վարկանիշային կազմակերպությունների փորձագիտական գնահատականները (օրինակ, «Զախողված երկրների ինդեքսը» զեկույցը), որոնց համաձայն՝ Հայաստանում մտավոր ռեսուրսների կայուն արտահոսքին զուգահեռ, զգալի ուշադրություն է դարձվում սպասարկման և ոչ արտադրողական ծառայությունների ոլորտների զարգացմանը: Չունենալով խոշոր բնական և եկամտաբեր ռեսուրսներ՝ Հայաստանում ավելի է շեշտադրվում ՄԿ մտավոր-ստեղծագործական պոտենցիալի զարգացման հիմնահարցը՝ որպես երկրի բարեկեցության ապահովման կարևոր երաշխիք: Նման իրավիճակում բավական սուր է դրված ՄԿ կուտակման և հետագա վերարտադրողականության հարցը, որի ուղղությամբ անհրաժեշտ է ձեռնարկել հրատապ լուծում պահանջող համարժեք և, միևնույն ժամանակ, ոչ ստանդարտ կիրառական քայլեր: Բարձրորակ կադրային խիստ սահմանափակ ռեսուրսների պայմաններում կրթության ոլորտում իրականացվող ներդրումները, որոնք, ի դեպ, բավական քիչ են, չեն կարող ապահովել այդ ներդրումներից ակնկալվող հետադարձ արդյունքները: Սա բացասական, ինչպես նաև պասիվ ՄԿ կուտակման դասական տարբերակն է, ինչի մասին հիշատակեցինք վերը:

ԵՎՍ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՕՐԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ[1]

Յուրի Գրոմիկո՝

Աշխարհն այսօր գտնվում է ֆինանսական իմպերիալիզմի շարունակվող համակարգային ճգնաժամի սահմաններում, դոլարի «իդեալական փոթորկի» պայմաններում: 2008-ին սկիզբ առած այդ ճգնաժամը չի վերացել և չի ավարտվել, ինչ էլ որ ասելու լինեն տնտեսագետները: Ճշմարիտ չէ, թե ԱՄՆ-ը, իբր, հասկացել է, թե ինչպիսին է լինելու հաջորդ տեխնո-արդյունաբերական կարգը, և իբր ունի բոլոր հարցերի պատասխանները: Այդ առասպելը տարածում են «քլինթոնոիդները» Ռուսաստանում: Նույն իրենք՝ լիբերալ-տնտեսագետները:

Ամերիկյան ազգը ամենապրագմատիկն է աշխարհում: Եթե ամերիկացիներն իրենց ձեռքում ունենային ապագայի ոսկե բանալին, նրանք իշխանությունը, ցանկացած պատրվակով, Թրամփին չէին տա: Կխոստանային կերակրել կենտրոնական նահանգների՝ իրենց ձայնը Թրամփին տված «գավառականներին», ի տարբերություն Արևմտյան և Արևելյան ափի բնակիչների՝ տոկուն լիբերտարիստների, համասեռամոլների և ամեն տեսակ «քլինթոնոիդների»: Թրամփն սկսում է արտադրության ամերիկյան եղանակի մեծ վերաձևումը: Կհաջողվի դա, թե ոչ՝ այլ հարց է: Բայց միանգամայն ակնհայտ է, որ ամերիկյան ֆինանսական էքսպանսիոնիզմին փոխարինելու է գալիս ինդուստրիալ-ենթակառուցվածքային մենակյացական (մի ինչ-որ ժամանակով) նացիոնալիզմը: Եվ դրա առաջին քայլը ձգտումն է՝ փակվել «երանելիների» հսկայական կղզում՝ Հյուսիսային Ամերիկայում, և ստեղծել արտադրության նոր եղանակ: Արտադրության այդ եղանակը կապված կլինի հաջորդ սերնդի աշխարհաենթակառուցվածքների ստեղծման հետ, որոնք կապահովեն աշխարհամասերի և երկրագնդի վերահսկողությունը:

ԱՄՆ-ում նման ենթակառուցվածքների ստեղծմանը զուգահեռ կստեղծվի նոր ենթակառուցվածքային լուծումների համաշխարհային շուկան: Ենթակառուցվածքային լուծումների համաշխարհային շուկան կպահանջի նոր

[1] https://regnum.ru/news/society/2221542.html

[*] Շիֆերսի անվան առաջանցիկ հետազոտությունների ինստիտուտի (Институт опережающих исследований имени Шифферса)տնօրեն:

ֆինանսական ներդրումներ, երկարաժամկետ ներդրումներ ենթակառուցվածքում և դրանց ապահովագրման համակարգերում: Նոր ենթակառուցվածքային լուծումներն էլ հենց վերահսկողությունն են երկրագնդի և աշխարհամասերի հանդեպ տեխնո-տնտեսական, այլ ոչ թե ռազմական միջոցներով: Այո, սա ԱՄՆ նոր քայլն է դեպի համաշխարհային տիրապետություն:

Ամերիկացիներն անվրդով գնում են աշխատանքի բաժանման խեղաթյուրված համակարգի փլուզմանը: Աշխատանքի բաժանման այդ խեղաթյուրված համակարգում, որը չգիտես ինչու կոչվում է համաշխարհային շուկա, ամբողջ ուժով փորձում են խցկել մեզ ռուսաստանյան «քլինթոնոիդները»: Իհարկե, նրանք արդեն հերթական անգամ փոխակերպվում են, փոխում են իրենց մաշկը՝ «քլինթոնոիդներից» վերածվում են թրամփականների: Իսկ ամերիկացիներն անվրդով քանդում են շղթաների ամբողջ համակարգը: Չինաստանի հետ կոնֆլիկտում անխնա կոչնչացվեն սպառողական ցանցերը, կոմպլեկտավարող մասեր մատակարարողների ցանցերը: Ամերիկացիներն իրենք պետք է մասնակցեն արտադրության ամբողջ ցիկլին: Դա կհանգեցնի տեղեկատվա-գիտելիքային ցանցերի փլուզմանը: Ճապոնիայից և Հարավային Կորեայից բերվող գիտատար բաղադրիչների ամբողջական խմբերի արտադրության համար նրանք ստիպված կլինեն իրենք ստեղծել արտադրանքի մի ամբողջ շարք տեսականիներ: Դրա համար հարկ կլինի զարգացնել կիրառական գիտելիքի հսկայական ոլորտներ: Դա կհանգեցնի հիմնարար և կիրառական գիտության կտրուկ առաջընթացի և զարգացման Չինաստանում: Դրանից հետո, հնարավոր է, տեղից կշարժվի նաև հիմնարար գիտությունը Ռուսաստանում, քանի որ օվկիանոսի այն կողմից հակասական տեղեկություններ կստացվեն այն մասին, թե սկսվում է ֆիզիկական սկզբունքների և էֆեկտների տրանսֆորմացիա: Կտրուկ կբարձրանա խորհրդային գիտության պահոցների փակ ինֆորմացիայի պահանջարկը:

Կսկսվի անցում էներգետիկայի նոր սկզբունքներին՝ ջրածնային էներգետիկային: Թրամփի հայտարարած թերթաքարային նավթի, թերթաքարային գազի, նավթի դժվարհասանելի շերտերից արդյունահանման կտրուկ ավելացումը ինքնանպատակ չէ: Նպատակը սինթեզ-գազին և ջրածնային էներգետիկային անցումն է: Նավթի արժեքը լիովին կառանձնացվի ավտոմեքենաների վառելիքի արժեքից: Վերջնականապես կավերվի և կոչնչացվի նավթադոլարը՝

ԱՄՆ և սաուդցիների այլասերված ամուսնական գործընկերությունը (ինչի մասին վաղուց երազում էր Ջերեմի Ռիվկինը)։ Այս ամենն առաջ կբերի ֆինանսական ցանցերի փլուզում և դրանց վերակազմում։

Կարճ ասած՝ աշխատանքի նոր բաժանման իբր կարգավորված այլասերված աշխարհը կփլուզվի ահավոր ուժով։ Լայնորեն ազդարարող համակարգային ինժեներիան կդառնա ոչ համակարգային, քանի որ այն «վերին հարկ» չունի, չունի փողի, իշխանության (թե՛ քաղաքացիական, թե՛ զինվորական) և ենթակառուցվածքային տեխնոլոգիաների վերջնափակում։

Մենք նոր պտույտով վերադառնում ենք հոբսիանականության «ահավոր աշխարհ։ Բազմաբևեռ, ոչ թե մեկ ինտեգրացիոն ամբողջի մեջ ընդգրկված աշխարհ՝ բոլորը բոլորի դեմ պատերազմով, սեփական շահամոլական խմբերի և էթնոդավանական՝ կիսաքանդ ու երկրների խաղաղ ամբողջից պոկված հանրույթների կողմից»։ Ինչպես ասում է Ռեյնհոլդ Նիբուրը «Ֆինանսական իմպերիալիզմի Ամերիկան, պարտադրելով էլեկտորալ դեմոկրատիայի և ազատությունների անհատականության արժեքները, ծնել է իշխանության ձգտող և օրինական պետականությունը ոչնչացնող թշնամական խմբերի արյունալի շիլաշփոթ»։ Այժմ Ամերիկան կամաց-կամաց դուրս է բերելու իր էլեկտրոդները մի շարք երկրների մարմիններից և հեռանալու է։ Գլոբալիզացիայի միաբևեռ աշխարհը «կփակվի»՝ ծնելով քաոսի նոր տեսակ։ Հիմա արդեն՝ «թողնված տարածքների քաոս»։

Ռուսաստանի փորձը՝ զբաղեցնել իր միաբևեռ իշխանությունը փակող Ամերիկայի տեղը, ենթադրում է, որ մեր երկիրն այնտեղ կգա ո՛չ ուժի դիրքերից կամայական լուծումների ինքնահաստատման համար։ Ռուսաստանը գալիս է՝ հաստատելով արդարության արժեքները։ Մասնավորապես, այն չի իրականացնում բազմէթնիկ, բազմադավան պետությունների մաքրում մոնոէթնիկ և մոնոդավան խմբերի՝ վերացնելով պատմականորեն ստեղծված բարիդրացիական համակեցությունը։ Բայց դրա համար Ռուսաստանը պետք է ունենա արդարության արժեքների տեսակետից դիտարկվող այդ նախագիծը։

Բայց կա նաև երկրորդ հանգամանքը։ Հրաժարվելով միաբևեռ իշխանությունից՝ Ամերիկան իր հետևից ձևավորում է «թողնված տարածքների քաոս», որտեղ դեռևս նոր աշխարհակարգ չի ստեղծվել։ Եվ թողնված տարածքների այդ քաոսն ընկնելու է Ռուսաստանի ուսերին, որը դեռևս չի առաջարկում նոր աշխարհակարգի կոնցեպտ և ի զորու չէ վերահսկողության տակ վերցնել այդ քաոսը։

«Թողնված տարածքների քաոսը» արխաիկայի քաոս է՝ դեսպաններին թիկունքից կրակելով, կանիբալիզմով, օրգանների վաճառքով, որը միգրացիայի միջոցով պաշտպանական մեմբրաններով թափանցում է ոսկե միլիարդի աշխարհ: Ռուսաստանը միանգամից չի կարող հաղթահարել գլոբալ բասմաչությունը թողնված տարածքներում: Այն պետք է միանգամից և՛ արդարության արժեքների հաստատողը դառնա աշխարհում, և՛ ուժեղ լինի: Բայց միանգամից դա գրեթե անհնար է անել: Անհրաժեշտ է երկարաժամկետ նախագիծ՝ երկրի զարգացման տեսքով, արտաքին աշխարհի վրա իրական կոնկրետ ազդեցությամբ: Թույլ տնտեսական սերտաճումը շուկաներին ոչինչ չի տա: Փաստորեն, փիլիսոփայական տեսանկյունից մենք գտնվում ենք այն նույն փիլիսոփայական համակարգերի շրջապատման և ինտեգրատիվ գործողության մեջ, որոնք ձևավորել էին արդիականության ծրագիրը: Մոդեռն՝ մեծատառով: Եվ Ռուսաստանը Մոդեռն նախագծի շարունակողն է: Եվ Ռուսաստանի քաղաքակրթական ինքնությունը Մոդեռնի ինքնությունն է: Մի կողմից՝ մեր առջև ծավալվում է պատերազմի հոբսյան՝ բոլորը բոլորի դեմ և ԱՄՆ միաբևեռ իշխանության հիման վրա համաշխարհային կառավարություն ստեղծելու անհրաժեշտության նախագիծը, ինչն էլ փորձում էին ավարտին հասցնել Քլինթոնն ու նրա խմբերը: Մյուս կողմից՝ կա ինքնագիտակցության զարգացման և անհատական մայրուղիներով կրոնական-հոգևոր արժեքների փոխանցման դեկարտյան նախագիծը: Երրորդ կողմից՝ կա գիտելիքների ինտեգրման և իմացության սահմանների ընդլայնման լեյբնիցյան նախագիծը, ինչպես նաև նախագծեր, որոնք իրականացվում են տարբեր երկրների կառավարությունների կողմից: Չորրորդ կողմից՝ կա անհատի ինքնակազմակերպման, մասնավոր սեփականության ձևավորման լոքյան նախագիծը: Եվ վերջապես, կա սպինոզյան նախագիծը՝ հայտնության կրոնի և փիլիսոփայա-ինտելեկտուալ աշխատանքի բաժանմամբ, արտադրության նոր եղանակի կոլեկտիվիստական պոռթկումով:

Սույն փիլիսոփայություններն ինքնատիպ ուժային գծեր են, որոնք թույլ են տալիս պարզել Մոդեռն նախագծի վիճակը: Այդ ուժային գծերում ներգրված են նաև գերմանական դասական փիլիսոփայությունը, մարքսիզմն ու պոստմարքսիզմը և առանց Մոդեռնի անհնար՝ նրա գունատ ստվերային պատճենը՝ պոստմոդեռնիզմի նախագիծը: Այս հիմնական փիլիսոփայական

խմբերի ուժային գծերի նոր ինտեգրումը պետք է տեղի ունենա մարդու, նրա կյանքի նոր ձևերի և եղանակների, մարդու և մարդկության գիտակցության մակարդակի բարձրացման, ինչպես նաև արտադրության նոր, արդյունավետ եղանակներին մարդու մասնակցության մասին պատկերացման շուրջ: Ռուսաստանը կարող է նման նախագիծ առաջարկել եվրասիական աշխարհամասի համար: Այդ նախագծի հիմքը՝ արդիականություն հասկացությունը, շարունակվող արդիականությունն է, որը վերափոխում է հենց արդիականություն հասկացությունը:

Զարգացման ծրագրի հիմնական խնդիրն այն է, որպեսզի առաջադրի առավել սուր քաղաքակրթական և կառավարչական հիմնախնդիրներ: Այդ հիմնախնդիրների առաջադրումը և դրանց լուծման նախագծերի կազմումը երկիրը վերածում են համաշխարհային քաղաքակրթական կենտրոնի: Եվ միայն այդ բնույթի հիմնախնդիրներն ունեն նշանակություն և իմաստ: Այսինքն՝ դրանք գործողության համաշխարհային հորիզոնի հիմնախնդիրներ են, այլ ոչ թե ինչ-որ տնաբույս սպեցիֆիկ ռուսական բարդություններ կամ հարցեր, որոնք նշվում են նրա համար, որպեսզի ոչ միայն չլուծվեն, այլ նաև չկշռադատվեն: Հիմնախնդրի առաջադրումը լիովին տարբերվում է փիառից և հանրությանը հուզելու համար իրականացվող քաղտեխնոլոգիական շոուից:

Աշխարհը գլորվել է լճացման և դեգրադացիայի տասնամյակներ: Ինչ վերաբերում է ԱՄՆ-ին և ԵՄ-ին: Եթե այս ճգնաժամը պայթյունի ձևով չհաղթահարվի, ապա տեխնոլոգիապես հետամնաց այնպիսի երկրներ, ինչպիսին ՌԴ-ն է, ցած կսահի առհասարակ: Տեխնոլոգիական առաջընթացի ճակատի խափանումը ոչ միայն կնվազեցնի, այլև բացարձակապես կքայքայի երրորդ-չորրորդ աշխարհի պայմանները: Այդ տեխնոլոգիական առաջընթացը պետք է լինի ենթակառուցվածքային: Խոսքը նոր ենթակառուցվածքների ստեղծման մասին է:

Այս տեսակետից Միացյալ Նահանգների նոր նախագահի ծրագիրը, որն ուղղված է ենթակառուցվածքային հեղափոխությանը, մի կողմից, մի փոքր շունչ քաշելու ժամանակ կտա Ռուսաստանի վրա աննախադեպ գաղափարախոսական ճնշման հարցում: Բայց մյուս կողմից՝ դա գործողության շանս է, որը կարող է բաց թողնվել: Այն բանից հետո, երբ ԱՄՆ-ը կձևավորի ԱՄՆ տարածքում ենթակառուցվածքային զարգացման տեխնոլոգիաների փաթեթը,

այն կձևավորի նոր ենթակառուցվածքային լուծումների համաշխարհային շուկա: Հաջորդ սերնդի ենթակառուցվածքային տեխնոլոգիաները նշանակում են երկրագնդի տոտալ կառավարում աշխարհակլիմայական ներգործության դիապազոնով, գիտակցության մանիպուլացում:

Հիմնախնդիրները նշանակում են մշտական ելք դեպի անիմանալին, այն սահմանի անցկացում, որից այն կողմ անհայտությունն է: Հիմնախնդիրների լուծումը նոր գիտելիքի ձեռքբերումն է, որը չունի մեկ ուրիշը: Ենթակառուցվածքային լուծումների դեպքում դա գիտելիքն է երկրագնդի վրա և տիեզերքում կյանքի նոր ձևերի մասին, գիտելիքն է կենսապահովման նոր համակարգերի վերաբերյալ:

Շատ կարևոր է ռազմավարական վեկտորը: Ռազմավարական վեկտորը Ռուսաստանի համար այսօր, իհարկե, պոստինդուստրիալիզմը և անգամ նեոինդուստրիալիզմը չէ, այլ նոր ենթակառուցվածքային հեղափոխությունը՝ որպես նաև նեոինդուստրիալիզմի և մասամբ՝ թվային տնտեսության պատվեր: Եվ որ գլխավորն է՝ նոր անթրոպ հանրայնության (*обществизм*), առհասարակ հանրության, առանձին մասնագիտական խմբերի, անձի զարգացման նոր հանրային գաղափարախոսության պատվեր:

Անթրոպ հանրայնությունը հանրության զարգացման մեթոդաբանություն է, որի գլխավոր խնդիրը մարդու զարգացման գործընթացն է՝ անթրոպոլոգիան: Կարելի է ասել, որ աշխարհը, մանավանդ ռուսաստանյան հանրությունը, սպասում են հենց այդ հանրային գաղափարախոսությանը:

«Ինչպե՞ս ենք ապրելու»,- հարցնում են տարբեր ցեղերի, տարբեր դավանանքների մարդիկ Երկիր մոլորակի բոլոր մասերում: Եվ նրանց համր հարցը նորից ուղղված է Ռուսաստանին: Մարդու ապագան ուղղակիորեն կապված է հասարակության ապագայի հետ: Ի՞նչ իմաստ ունի, եթե ունենաս տեխնոենթակառուցվածքային գերիշխանություն ամբողջ մոլորակում կամ կերակրես ամբողջ աշխարհը, բայց հոգիդ կործանես,- գլխումդ լուռ ճչում է Քրիստոսը: Ուստի, պետք է նաև աշխարհն ազատել սովից, ստեղծել ստեղծարար աշխատանքի հնարավորություն միլիարդավորների համար, և անցնել Պայծառակերպության միջով:

Հանրության հիմնական խնդիրը, որն ընկած է *Զարգացման* հանրության ստեղծման հիմքում, այն է, որպեսզի կտրուկ բարձրացվի ենթակառուցվածքների և արտադրությունների հզորությունը (ոչ թե արտադրանքի միա-

վորի ինքնարժեքն իջեցնել, դա երկրորդական է)։ Բայց այդ հզորության ավելցուկը, նոր հանրային հարստությունը, և որ գլխավորն է՝ դրա կապիտալիզացիան, այնուհետև հարկավոր է ճիշտ բաշխել այն խմբերի միջև, որոնք ապահովել են այդ բեկումը, առհասարակ՝ հասարակության միջև, որի վերարտադրության համար պատասխանատու է պետությունը, կոնկրետ ինստիտուտների միջև, որոնք ապահովել են ճեղքումն իրականացնող խմբի գործողությունը։

Մեզ հարկավոր է երկրագնդի վրա արդարության հաստատման գաղափարախոսություն և ենթակառուցվածքների զարգացման բեկումնային ծրագիր։ Եվ սա ոչ թե ամբողջի երկու մասն է, այլ միասնական ամբողջական ծրագիր։

ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԵՎ ՀԵՏՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Գագիկ Հարությունյան*

Եթե նրանք չհասկանան, որ մենք բերում ենք իրենց
մաթեմատիկորեն անսխալ երջանկություն,
մեր պարտականությունն է ստիպել նրանց լինել երջանիկ։
Եվգենի Զամյատին[1], «Մենք»

Եթե փորձենք համակարգել 20-րդ դարի սկզբի ռուսաստանյան, իսկ հետո նաև խորհրդային ժամանակաշրջանի տեղեկատվական ոլորտում ընթացող զարգացումները, ապա դրանք ընդհանրական տեսքով կարելի է ներկայացնել հետևյալ փուլերով.

1. Բոլշևիկների ձեռնարկած ագիտացիոն-պրոպագանդիստական գործողություններն իշխանությունների դեմ (նախահեղափոխական և հեղափոխական շրջան), որոնք ավարտվեցին Ռուսական կայսրության փլուզումով և ԽՍՀՄ ստեղծումով (պայմանականորեն՝ 1905-1917թթ.),
2. ԽՍՀՄ-ում գաղափարախոսական և վարչական տոտալ վերահսկողության տակ գտնվող տեղեկատվական համակարգի հաստատում, որը որոշակի ձևափոխումների ենթարկվեց Հայրենական պատերազմի տարիներին։

Տեղեկատվական գործոնը հեղափոխական գործընթացներում. Առաջին փուլում տեղեկատվական գործընթացների տեսանկյունից շրջադարձային կարելի է համարել 1914թ. Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի դեմ Ռուսաստանի պատերազմի մեջ մտնելն Անտանտի կազմում։ Պետք է արձանագրել, որ ցարական իշխանությունների տեղեկատվական քաղաքականությու-

---

* «Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն։

[1] Ռուս ականավոր գրող (1884-1937թթ.), որը, տարված լինելով հեղափոխական գաղափարներով, միևնույն ժամանակ ընդդիմանում էր բոլշևիկյան մոտեցումներին մի շարք սկզբունքային հարցերում։

նը պատերազմական տարիներին դժվար է անվանել արդյունավետ: Ինչ որ չափով այդ քաղաքականությունը հիշեցնում էր գերմանականին (տե՛ս [1]), քանի որ ռուսական սպայակազմը նույնպես իր արժանապատվությունից ցածր էր համարում տեղեկատվական հնարքներ կիրառել թշնամու դեմ: Նկատենք, որ նույն նկատառումներով ցարական բանակի սպաներն անգամ պատերազմի տարիներին ձեռք չէին մեկնում հակահետախուզական ծառայության ներկայացուցիչներին, մինչդեռ բրիտանական բանակում վերջիններս մեծ հեղինակություն էին վայելում [2]: Թերևս պատահական չէր, որ ստեղծված նման իրադրությունից օգտվեցին ոչ այնքան կայսրության արտաքին թշնամիները, որքան ներքին ընդդիմադիրները: Վերջիններից հատկապես ակտիվ էր Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական (բոլշևիկյան) կուսակցությունը *(Российская социал-демократическая рабочая партия (большевиков)- РСДРП (б)*:

Բոլշևիկները մեծ ուշադրություն էին հատկացնում մամուլին և ագիտացիոն-պրոպագանդիստական գործոնին: Արդեն 1900թ. ապագա «համաշխարհային պրոլետարիատի առաջնորդ» Լենինի նախաձեռնությամբ հիմնադրվեցին «Իսկրա», իսկ հետո նաև «Սոցիալ-դեմոկրատ» և «Պրավդա» թերթերը, որոնք սկզբնական փուլում տպագրվում էին արտասահմանում և ոչ լեգալ ճանապարհներով տարածվում Ռուսաստանում: Բոլշևիկներին հաջողվեց երկրում ստեղծել լավ կազմակերպված պրոպագանդիստական խմբակների ցանց, որոնց անդամներն այսպես կոչված «արգելված գրականություն» էին տարածում, սովորում և սովորեցնում էին քարոզչություն վարելու հմտությունները և կիրառում դրանք բանվորների ու այլ սոցիալական խմբերի (որոնց թվում զգալի մաս էին կազմում գիմնազիստները և ուսանողները) հետ հանդիպումների ժամանակ: Ձեռք բերված գաղափարախոսական և կազմակերպչական փորձը թույլ տվեց բոլշևիկներին «իմպերիալիստական պատերազմի» սկսվելու առաջին իսկ օրերից ակտիվ տեղեկատվական գործունեություն ծավալել ցարական իշխանությունների դեմ: Իրենց թռուցիկներում նրանք կոչ էին անում «վերջացնել պատերազմը գերմանացիների դեմ և սկսել պայքարել իրական թշնամու՝ ցարի և կառավարության դեմ»: Ագիտացիոն հնարամտության օրինակ կարող է համարվել տարածում գտած մի թռուցիկ, որում որևէ կրոն և հավատք չընդունող աթեիստ բոլշևիկները, մեղադրելով «կաշառված» ցարական իշխանությանը պատերազմ հրահրելու հարցում, դի-

մում են ոչ միայն զինվորներին, այլև բոլոր ուղղափառ քրիստոնյաներին։ Սակայն հարկ է ամրագրել, որ բոլշևիկների տեղեկատվական հաջողությունները հիմնականում պայմանավորված էին իրենց գաղափարների գրավչությամբ. սոցիալիստական գաղափարախոսությունը, մասնավորապես, խոստանում էր ազատագրել աշխատավորներին ցարական բռնապետությունից և կապիտալիստական շահագործումից, հողը վերադարձնել գյուղացիներին, իսկ գործարանները հանձնել բանվորներին։

Նման գաղափարների տարածման գործում, թերևս, առավել գործուն էր բանավոր քարոզչությունը, որը հատկապես արդյունավետ էր, երբ համատեղվում էր պատերազմի դեմ վարվող այսպես կոչված «խրամատային ագիտացիայի» հետ։ Նման գործողությունների արդյունքում դասալքությունը ճակատից ընդունեց զանգվածային բնույթ։ Ի լրումն՝ պատերազմական Ռուսաստանում կուտակվել էին բազմաթիվ տնտեսական, սոցիալական և այլ հիմնախնդիրներ, կտրուկ աճել էր բնակչության դժգոհությունը։ Բնական էր, որ ստեղծված իրավիճակում բոլշևիկյան տեղեկատվա-հոգեբանական գործողությունների ազդեցությունը հանրային տրամադրությունների և կողմնորոշումների վրա խիստ մեծ էր։ Միևնույն ժամանակ, բոլշևիկների գործունեությունն իր հերթին ավելի էր վատթարացնում իրավիճակը։

Այս ամենին զուգահեռ՝ բոլշևիկներն իրենց պայքարում ունեին նաև յուրովի դաշնակիցներ՝ ի դեմս օտարերկրյա հատուկ ծառայությունների։ Հատկանշական է, որ դրանք միայն գերմանական հատուկ ծառայությունները չէին, որոնց գործողություններում առանձնահատուկ տեղ էր գրավում գերմանական գլխավոր շտաբի գործակալ, հանրահայտ Ալեքսանդր Պարվուսը [3]։ Կայսրության կազմալուծումն աշխարհաքաղաքական տեսանկյունից ցանկալի էր նաև Ռուսաստանի որոշ դաշնակիցներին։ Այս ամենը հիմք է տալիս անգամ որոշ վերլուծաբանների զուգահեռներ անցկացնել Հոկտեմբերյան հեղափոխության և մեր դարաշրջանի «գունավոր հեղափոխությունների» միջև։

Ի վերջո, վերոնշյալ, ինչպես նաև մի շարք այլ օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների համախումբը թույլ տվեց բոլշևիկներին 1917թ. հոկտեմբերի 25-ին զավթել իշխանությունը և երկարատև (1917-1922թթ.) քաղաքացիական պատերազմից հետո (որում տեղեկատվական գործողությունները նույնպես կարևոր դերակատարում ունեին) հաստատել իրենց իշխանությունը նախկին կայսրության մի զգալի հատվածում։

Խորհրդային տեղեկատվական համակարգի ձևավորումը հետհեղափոխական ժամանակաշրջանում. Խորհրդային պետությունն իր ստեղծման առաջին տարիներից տեղեկատվական խնդիրները բարձրացրեց ինստիտուցիոնալ մակարդակի: Արդեն 1920թ. բոլշևիկյան կուսակցության Կենտրոնական կոմիտեի կազմում ստեղծվեց Ագիտացիոն-պրոպագանդիստական բաժինը՝ «Ագիտպրոպը»: Այս բառակապակցությունը հետագայում ընկալվում էր որպես կոմունիստական քարոզչամեքենայի ընդհանրական անվանում: Շատ չանցած՝ 1922թ., Նիժնի Նովգորոդ քաղաքում սկսեց գործել Կոմինտերնի (կոմունիստական ինտերնացիոնալ՝ «*коминтерн»)* անվան ռադիոկայանը (որն այն ժամանակ համարվում էր ամենահզորներից մեկն աշխարհում): Ռադիոհաղորդումների նպատակն էր կոմունիստական գաղափարների տարածումն այլ երկրներում և հասարակություններում, ստեղծել «միացյալ ճակատ» կապիտալիզմի դեմ: Այդ գաղափարներն արտահայտվում էին նաև զանգվածային տարածում ստացած պաստառներում, մամուլում, տարաբնույթ հանրահավաքներում և հավաքներում: Հարկ է նկատել նաև, որ սոցիալիստական գաղափարախոսությունը 20-րդ դարի սկզբում իրոք գրավիչ էր ոչ միայն Ռուսաստանում, և դրա ապացույցն էին սոցիալիստական հեղափոխությունների փորձերը եվրոպական երկրներում՝ Գերմանիայում և Հունգարիայում 1918-1919թթ.:

Մեծ թափ ստացավ նաև կոմունիստական գաղափարախոսության և սկզբունքների քարոզչությունը ներքաղաքական հարթությունում: Բանակի բոլոր ստորաբաժանումներում և քաղաքացիական հիմնարկներում պարտադիր ներդրվեց լայն իրավասություններ ունեցող զինվորական կոմիսարների և կուսակցական կոմիտեների քարտուղարների ինստիտուտը: Այդ մարմինների խնդիրն էր ժողովների, քաղպարապմունքների և այլ միջոցառումների կազմակերպումը, որոնցում քննարկվում էին ոչ միայն ներքին և արտաքին քաղաքականության հարցերը, այլև տվյալ կոլեկտիվի անդամների քաղաքական կողմնորոշումներն ու անգամ նրանց «բարոյական կերպարը»: Այդ միջոցառումներում լուսաբանվում էին նաև կուսակցության գլխավոր թերթի՝ «Պրավդայի» *(«Правда»)* առաջնորդող հոդվածները, որոնցում շեշտադրվում էին հրատապ խնդիրները և փաստացի հրահանգներ էին տրվում տեղային կուսակցական կազմակերպություններին:

Կուսակցական բջիջներին զուգահեռ՝ ձևավորվեց նմանատիպ կոմերիտական և արհմիութենական համակարգ, որոնք նույնպես ունեին իրենց

պաշտոնական տեղեկատվական մարմինները՝ «Կոմսոմոլսկայա պրավդա» *(«Комсомольская правда»)* և «Տրուդ» *(«Труд»)* թերթերը: Անգամ մանկապատանեկան պիոներական կազմակերպությունն ուներ իր գլխավոր թերթը՝ «Պիոներսկայա պրավդա» *(«Пионерская правда»):* Բացի նշված համամիութենական նշանակության թերթերից, բոլոր խորհրդային հանրապետություններում և մարզերում լույս էին տեսնում դրանց տեղայնացված տարբերակները: Հայաստանում, օրինակ, հրատարակվում էր «Պիոներ կանչ» թերթը:

Այսպիսով, ձևավորվեց կենտրոնացված հիերարխիկ համակարգ, որում ներգրավված էին ինչպես կուսակցության գերագույն մարմինները՝ Քաղբյուրոն և Կենտրոնական կոմիտեն, այնպես էլ հանրապետությունների, մարզերի, քաղաքների, գյուղերի, շրջանների և առանձին հիմնարկների ու ձեռնարկությունների կուսակցական, կոմերիտական և արհմիութենական կազմակերպությունները: Այդ համակարգում առանձնահատուկ ուշադրություն էր դարձվում ցանկացած տեղեկատվական արտադրանքի բովանդակությանը: Նման հարցերով զբաղվում էր դեռևս 1922թ. հիմնված Գրականության և հրատարակչությունների գործերով գլխավոր վարչությունը, որը հայտնի էր «Գլավլիտ» *(«Главлит» - Главное управление по делам литературы и издательств)* անվամբ[2]: Այս մարմնի խնդիրն էր գրաքննության ենթարկել բոլոր հրատարակվող (մամուլի հոդվածներից մինչև բանաստեղծությունները), հեռարձակվող նյութերը, կինոֆիլմերը, բեմականացումները և գեղանկարչական, քանդակագործական ստեղծագործությունները:

Վերոնշյալ խստություններին զուգահեռ, որոնք արգելակում էին տեղեկատվական ոլորտի զարգացումը, Խորհրդային Միության ղեկավարությունը, ի թիվս այլ հարցերի, ընդհարվեց մի խնդրի, որին տրված լուծումները՝ գուցե և միջնորդավորված, զգալիորեն նպաստեցին հասարակությունում տիրող տեղեկատվական միջավայրի բարելավմանը: Այդ հարցի էությունը հետևյալն էր:

Շրջափակման մեջ գտնվող խորհրդային պետությունն ուներ լրջագույն հիմնախնդիրներ՝ կապված հեղափոխական շրջանում քայքայված տնտեսության վերականգնման հետ: Այդ խնդիրը լուծելու համար ձևավորվեց տնտե-

[2] Նկատենք, որ գրաքննության ավանդույթն այս կամ այն ձևով բնորոշ էր բոլոր դարաշրջաններին, սակայն ինստիտուցիոնալ կառույցի տեսքով այն ձևավորվել է 1559թ., երբ կաթոլիկ եկեղեցին պաշտոնապես սկսեց հրատարակել այսպես կոչված «արգելված գրքերի ցուցիչը», որում ներկայացված էին արգելված գրականության ցուցակները: Այդ գործառույթից Վատիկանը պաշտոնապես հրաժարվեց միայն 1966թ.:

սության պլանային համակարգը, կազմվեցին ինդուստրիալացման ծրագրերը, որոնք առաջին հերթին ուղղված էին հզոր ռազմական արդյունաբերություն ստեղծելուն: Սակայն այդ հարցերի լուծումն անհնար կլիներ առանց ամենատարբեր բնագավառների առաջատար և բարձրակարգ մասնագետների, գրագետ ու որակյալ տեխնիկական անձնակազմի և բանվորների: Նման կադրեր աճեցնելու նպատակով ձևավորվեց կրթական և գիտական բավական կուռ համակարգ, որի շնորհիվ ստացված արդյունքներն ավելի քան տպավորիչ էին: Այս նույն համատեքստում լուծվեց բնակչության համընդհանուր գրագիտության խնդիրը (մինչև իսկ ամենահեռավոր գյուղերում գործում էր այսպես կոչված «լիկբեզ» («անգրագիտության վերացում»՝ *«ликвидация безграмотности»* բառակապակցության հապավում) նախագիծը, հիմնվեցին բազմաթիվ ուսումնական և գիտական հաստատություններ (բավական է նշել, որ 1918-1923թթ., երբ դեռ ընթանում էր քաղաքացիական պատերազմը, երկրում ստեղծվեցին տասնյակ գիտահետազոտական ինստիտուտներ), ձևավորվեց միութենական գրադարանային համակարգ (անգամ ամենափոքր բնակավայրերում հիմնադրվեցին գրադարաններ): Դեռևս 1920թ. ստեղծվել էր հատուկ մարմին՝ Գլխավոր քաղաքական-լուսավորչական կոմիտե (ավելի հայտնի է *Գլավպոլիտպրոսվետ («Главполитпросвет»)* անվամբ), որը զբաղվում էր այդ խնդիրներով, և որը տարբեր անվանումներով ու ձևաչափերով գործում էր մինչև ԽՍՀՄ փլուզումը: Դրանցից առավել հայտնին «Գիտելիք» կազմակերպությունն էր, որն, ի դեպ, վերականգնվեց Ռուսաստանում 2016թ.՝ փոքր-ինչ այլ կառուցվածքով և նպատակներով: Սովորելու և գիտելիքներ ստանալու անհրաժեշտության հարցերն այդ մարմնի շնորհիվ լայնորեն քննարկվում և շրջանառվում էին մամուլում, ռադիոհաղորդումներում, կուսակցական, կոմերիտական և պիոներական հավաքներում: Այդ քարոզչությունն իր արտահայտությունն էր գտնում բազմաթիվ կարգախոսներում ու պաստառներում:

Վերոնշյալի համատեքստում ուշադրության արժանի է նաև հետևյալ հանգամանքը: Ռուսաստանյան մտավորականության մի զգալի մասը, չընդունելով բոլշևիկյան համակարգը, տարբեր ճանապարհներով և զանազան հնարքներ կիրառելով, լքեց հայրենիքը: Նկատենք, որ էմիգրանտների շրջանում քիչ չէին նաև սոցիալիստական գաղափարախոսության համակիրները, օրինակ՝ նույն Եվ. Զամյատինը, որի խոսքերն են որպես բնաբան ծառայել այս հոդվածի համար: Մինչդեռ մտավորականության ներուժը խիստ անհրաժեշտ

էր խորհրդային պետությանը ոչ միայն սոցիալ–տնտեսական խնդիրների լուծման, այլև վերոնշյալ գիտական, մշակութային և կրթական համակարգը ստեղծելու համար: Այս հարցերը լուծելու նպատակով խորհրդային իշխանությունները դիմեցին մի շարք քայլերի: Առաջինն այն էր, որ գրավիչ աշխատանքային և կենցաղային պայմաններ առաջարկելով՝ փորձում էին հետ կանչել այլ երկրներում գտնվող գիտնականներին, արվեստագետներին ու ընդհանրապես մտավորականությանը: Դա հետագայում կիրառվող այն մոտեցման նախադեպը հանդիսացավ, երբ իշխանություններն առավել կարևորում էին ոչ թե տվյալ անձի հավատարմությունը խորհրդային կարգերին, այլ նրա պրոֆեսիոնալ կարողությունները (բնականաբար, այս սկզբունքը գործում էր որոշակի սահմաններում, և «կարգազանցները» պատժվում էին ստալինյան ռեժիմի ամբողջ խստությամբ): Զուգահեռ՝ արտոնյալ պայմաններ էին ստեղծվում երկրում մնացած մասնագետների համար, որոնց մի զգալի մասը նույնպես թերահավատորեն էր տրամադրված տիրող կարգերի նկատմամբ: Նկատենք, որ Հայաստանում գիտության և կրթության հետ կապված հիմնախնդիրներին մեծ կարևորություն էր տալիս Ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ Ալ.Մյասնիկյանը (1886-1925թթ.): Նրա ծավալած գործունեությունը հենք հանդիսացավ Երկրորդ հանրապետության կայացման և հետագա զարգացման համար:

Վերը ներկայացվածի համատեքստում հարկ է վերհիշել, որ գիտակրթական խնդիրներին ուղղված քաղաքականությունը տեղեկատվական ռազմավարության մասն է կազմում: Այս համատեքստում կարելի է ամրագրել, որ գիտելիքների վրա խարսխված խորհրդային հանրության և ծայրահեղականացված գաղափարախոսական քարոզչության միջև գոյացած անտագոնիզմը շարունակաբար խորացավ և հետագայում դարձավ խորհրդային համակարգի փլուզման հիմնական պատճառներից մեկը:

Գրականություն

1. Գագիկ Հարությունյան, Երրորդ ռեյխի տեղեկատվական քաղաքականությունը, ԳԼՈԲՈՒՍ, #10 (79), էջ 5, 2016:
2. Գագիկ Հարությունյան, Անգլո-ամերիկյան տեղեկատվական գործողությունները Համաշխարհային պատերազմներում, ԳԼՈԲՈՒՍ, #9 (78), էջ 5, 2016:
3. Земан З., Шархау У., «Кредит на революцию. План Парвуса» /Пер. с англ. Л.А. Игоревского, М., ЗАО Центрполиграф, 2007, 319 с.

ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԽՍՀՄ-ՈՒՄ

Գագիկ Տերտերյան[*]

Հայրենական պատերազմում նացիզմի դեմ տարած հաղթանակն աննախադեպ բարձրացրել էր ԽՍՀՄ հեղինակությունն աշխարհում, ինչը բարենպաստ պայմաններ էր ստեղծել կոմունիստական գաղափարախոսության տարածման համար: Այս խնդրում մեծ դերակատարում ունեցան տարբեր երկրների կոմունիստական կուսակցությունները և նրանց տեղեկատվական միջոցները: Օրինակ, Ֆրանսիայում ժողովրդականություն էին վայելում «Յումանիտե» (*«L'Humanité»* - «Մարդկություն»), իսկ Իտալիայում՝ «Ունիտա» («*L'Unità»* - «Միասնություն») կոմունիստական թերթերը, որոնք հիմնադրվել էին դեռևս նախապատերազմյան ժամանակաշրջանում: Դրան զուգահեռ՝ այսպես կոչված «ձախ» կողմնորոշում ունեցող մամուլը, հատկապես Եվրոպայում, զգալի նյութական և կազմակերպչական աջակցություն էր ստանում Խորհրդային Միությունից: «Սառը պատերազմի» պայմաններում ընթացող տեղեկատվական հակամարտությունում այն կապիտալիստական համակարգի հիմնական ընդդիմախոսն էր:

Այլ օրինաչափություններ էին գործում ԽՍՀՄ ներսում, որտեղ պատերազմի ավարտից հետո տեղեկատվական ոլորտում հաստատվում է փոքրինչ անորոշ և երկիմաստ շրջան: Ակնհայտ էր, որ ռազմական իրավիճակին հարիր տեղեկատվական քաղաքականությունը խաղաղության պայմաններում արդյունավետ չէր կարող լինել: Ժամանակավրեպ կլիներ նաև երեսնական թվականների մեթոդներին վերադառնալը. այդ փուլում դեռևս նոր էին «կերտվում» «խորհրդային մարդը» և հասարակությունը, մինչդեռ հետպատերազմյան շրջանում իշխանությունները գործ ունեին հսկայական կորուստների գնով պատերազմում հաղթած և այդպիսով նույն խորհրդային կարգերը պաշտպանած հանրության հետ:

Այս ամենի համատեքստում պետք է նորից փաստել, որ տեղեկատվական քարոզչությունը ԽՍՀՄ-ում վերածվել էր տոտալ կառավարման գործուն

[*] Փորձագետ:

միջոցի, որն անհրաժեշտության դեպքում ուղեկցվում էր նաև ռեալ գործողություններով՝ քաղաքական և վարչական բռնաճնշումներով (ռեպրեսիաներով)։ Ըստ ամենայնի, խորհրդային իշխանությունները, ի դեմս գեներալիսիմուս[1] դարձած Ի.Ստալինի, հետպատերազմյան շրջանում չէին պատրաստվում ձեռնարկել որևիցե նոր մոտեցում տեղեկատվական և ընդհանրապես քաղաքական ոլորտում։ Իսկ նրանք, ովքեր համարձակվում էին ինքնուրույն քայլեր կատարել, անմիջապես հայտնվում էին անվտանգության ծառայությունների նկուղներում կամ *«արխիպելագ ԳՈՒԼԱԳ»*-ի[2] ճամբարներում։

Միևնույն ժամանակ, սոցիալիստական գաղափարախոսության մենատիրությունը հասարակությունում առաջացրել էր բազմաթիվ խնդիրներ, որոնք վանում էին մարդկանց այդ ոգով տարվող քարոզչությունից։ Նման պարագայում սկսում է գործել քարոզչության և իրականության միջև խզման հայտնի մեխանիզմը, երբ անգամ բարձր մակարդակով կատարվող ագիտացիոն-պրոպագանդիստական աշխատանքը կորցնում է արդյունավետությունը։ Միակուսակցական պրոպագանդան դեռևս նախապատերազմյան շրջանում ձևավորված զարգացած հասարակության համար անհամոզիչ էր։ Արդյունքում՝ հանրությունում ձևավորվել էր սոցիալական մի ստվար շերտ, որի ներկայացուցիչների գիտելիքները և վերլուծաբանական կարողությունները թույլ էին *տալիս* ադեկվատ ընկալել իրականությունը և գալ համապատասխան եզրակացությունների։

Ստեղծված իրավիճակի համար մտահոգ էր նաև կուսակցական վերնախավի մի մասը։ Դրանց թվին էր պատկանում Նիկիտա Խրուշչովը (1894–1971թթ.), որը Ստալինի մահվանից հետո (1953թ.) կարողացավ իր ձեռքը վերցնել իշխանությունը։ Առաջնորդի մահը, համաձայն հիմնավորված վարկածների և հետագայում հայտնված վկայությունների, ուղեկցվեց յուրատեսակ տեղեկատվական գործողությամբ։ Համաձայն այդ վարկածների, առաջնորդը մահացել էր մարտի 1-ին, սակայն հանրությունում անսպասելի լուրից շփոթ չառաջացնելու, ինչպես նաև ղեկավար պաշտոնների հետ կապված խնդիրները

[1] Մինչ Ստալինը, նման բարձրագույն զինվորական կոչում Ռուսաստանում ստացել էր հայկական արմատներ ունեցող զորավար Ալեքսանդր Սուվորովը (1730–1800թթ.)։

[2] *ԳՈՒԼԱԳ* – ռուս.՝ *Главное управление лагерей* բառակապակցությունից, հապավումը՝ *ГУЛАГ:* Այս արտահայտությունը տեղեկատվական լայն շրջանառության մեջ է մտել Ալեքսանդր Սոլժենիցինի *«Արխիպելագ ԳՈՒԼԱԳ»* գրքի շնորհիվ, որտեղ նա փաստագրական վկայությունների հիման վրա նկարագրել էր ստալինյան ճամբարներում տիրող անողոք բարքերը և ընդհանրապես քաղաքական ճնշումների համակարգը։

կարգավորելու նպատակով մարտի 1-5-ը բոլոր լրատվամիջոցները հատուկ հաղորդագրություններ էին արձակում առաջնորդի վատ առողջական վիճակի մասին, իսկ մահվան լուրը հայտարարվեց միայն մարտի 5-ին:

Տեղեկատվական ոլորտը «Ձնհալի» ժամանակաշրջանում. Խորհրդային նոր ղեկավարությունը Ն.Խրուշչովի նախաձեռնությամբ դատապարտեց Ստալինի պաշտամունքը (այսպես կոչված «անհատի կուլտը»), *ԳՈՒԼԱԳ-ից* ազատագրվեց քաղաքական բանտարկյալների մի զգալի մասը, տեղի ունեցավ քաղաքական, հասարակական և տեղեկատվական համակարգի որոշակի ազատականացում[3]: Այդ տարիներին մեծ տարածում էր գտել ականավոր գրող Իլյա Էրենբուրգի «Ձնհալ» *(«Оттепель»)* վեպը, որի անունով էլ հետագայում սկսեցին անվանել այդ ողջ ժամանակաշրջանը:

ԽՍՀՄ հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցան որակական փոփոխություններ. մամուլում, ռադիո- և հեռուստատեսային հաղորդումներում հայտնվեցին տեղեկություններ, անկեղծ քննարկումներ ու վերլուծություններ երկրում տեղ գտած բազմաթիվ հիմնախնդիրների մասին, բացահայտվում և նկարագրվում էին ստալինյան բռնաճնշումները և այլն: Ավելի անկողմնակալ, քան նախկինում, սկսեց լուսաբանվել նաև «երկաթե վարագույրից» այն կողմ գտնվող երկրների հասարակական և քաղաքական կյանքը: Ձևավորվեց արձակագիրների, պոետների և հրապարակախոսների մի մեծ խումբ (Ալ.Սոլժենիցին, Վ.Շալամով, Վ.Ակսյոնով, Վ.Նեկրասով, Եվ.Եվտուշենկո, Ա.Վոզնեսենսկի և շատ ուրիշներ), որոնց ստեղծագործությունները տպագրվում էին *«Новый мир», «Юность», «Москва»* և հեղինակություն ու ժողովրդականություն վայելող այլ ամսագրերում: Զգալի առաջընթաց գրանցվեց նաև կինոյի, բեմարվեստի և ընդհանրապես արվեստի բոլոր ոլորտներում:

«Ձնհալի» ժամանակաշրջանում ազատամիտ ստեղծագործությունների տարածումը պետք է դասել տեղեկատվական գործողությունների շարքին, քանի որ դրանք, իրենց գեղարվեստական նշանակությունից բացի, էական ազդեցություն ունեցան հասարակության աշխարհայացքային և գաղափարական կողմնորոշումների վրա: Այս առիթով նկատենք, որ ռուսաստանյան հասարակությունում, ավանդաբար, միշտ մեծ է եղել գրականության դերակատարումը:

[3] Ավելորդ չէ հիշատակել, որ ազատականացման գործընթացում Ն.Խրուշչովի ակտիվ աջակիցներից էր Քաղբյուրոյի անդամ Անաստաս Միկոյանը (1895-1978թթ.):

Տեղեկատվական ներգործության նշված հետևանքները, ի թիվս մի շարք այլ գործոնների, խիստ անհանգստացնում էին կուսակցական վերնախավի մի մասին: Արդյունքում՝ Ն.Խրուշչովը 1964թ. պաշտոնանկ արվեց նախկին համախոհների կողմից: Հետխրուշչովյան ժամանակահատվածում, որը ստացավ «լճացում» կամ, ինչպես ընդունված էր այդ տարիներին՝ *«զաստոյ»* անվանումը[4], տեղի ունեցան նկատելի խստացումներ: Սակայն դրանք հեռու էին ստալինյան դարաշրջանում կիրառվողներից: Դա պայմանավորված էր նրանով, որ «ձնհալի» արդյունքում խորհրդային հանրության մի զգալի հատվածի աշխարհընկալումներն արդեն անդառնալիորեն փոխվել էին, ինչն ընկալում էին նաև իշխանությունները: Տեղեկատվական նոր միջավայրն ազդել էր նաև «*նոմենկլատուրայի*»[5] հոգեկերտվածքի վրա, և նրանք ավելի հանդուրժողական էին դարձել: Ստեղծված իրավիճակում ուղղակի անհնար էր կիրառել տոտալ բռնաճնշումների նախկին մեթոդները: Սակայն տեղեկատվական ոլորտի ազատականացման գործընթացն արգելակվեց, մասնավորապես՝ գրեթե անհետացան ստալինյան դարաշրջանի բռնաճնշումներին վերաբերող հրապարակումները:

Բայց հասարակության ոչ բոլոր անդամներն էին համաձայն նման քաղաքականության հետ, և հենց այդ տարիներին ԽՍՀՄ-ում սկիզբ առավ այլախոհական կամ, ինչպես ընդունված է անվանել՝ «դիսիդենտական» շարժումը:

Այլախոհական շարժման և օտարերկրյա կառույցների տեղեկատվական գործողությունները ԽՍՀՄ-ում. Նկատենք, որ առանձին այլախոհներ և այլախոհական շարժումներ եղել են համաշխարհային պատմության գրեթե բոլոր փուլերում, և այդ երևույթը հասարակության զարգացման տեսանկյունից հաճախ կարևոր նախապայման է հանդիսանում: Օրինակ, աշխարհիկ մոտեցումներ ցուցաբերելու դեպքում այլախոհական կարելի է անվանել դեռևս մեր թվարկության 1-ին դարում սկիզբ առած քրիստոնեական շարժումը: Միևնույն ժամանակ, այլախոհների դեմ պայքարի դասական օրինակ են նաև միջնադարյան ինկվիզիցիայի գործողությունները հերետիկոսների դեմ և այլն: Արդեն նոր ժամանակաշրջանում այլախոհական շարժումներ էին տեղի ունենում ոչ միայն խորհրդային, այլև այլ երկրների հասարակություններում:

[4] *«Застой»* - այսպես է բնութագրվում խորհրդային պատմության 1964-1986թթ. ժամանակահատվածը, երբ ԽՍՀՄ ղեկավարն էր կուսակցության գլխավոր քարտուղար Լեոնիդ Բրեժնևը:

[5] «Նոմենկլատուրա» *(ռուս.՝ номенклатура)* – վերադաս կուսակցական մարմինների կողմից նշանակվող պատասխանատու աշխատողների սոցիալական շերտը ԽՍՀՄ-ում:

Սակայն տարբեր երկրներում ինչպես այլախոհների գործունեությունը, այնպես էլ նրանց դեմ պայքարը յուրովի էր իրականանում: Օրինակ, ի նշան բողոքի Վիետնամի դեմ ԱՄՆ վարած պատերազմի (1965-1974թթ.), 65 հազ. ամերիկացի դասալքեց ամերիկյան բանակը: Սակայն ամերիկյան տեղեկատվական տեխնոլոգները կարողացան այդ շարժումը ներկայացնել որպես խաղաղության համար պայքար և ամերիկյան ժողովրդավարության հաղթանակ: Հատկանշական է, որ մեր ժամանակներում նույնպես ձևավորվում են այլախոհական շարժումներ՝ ուղղված, օրինակ, ծայրահեղականացված ազատական գաղափարախոսության (կամ ինչպես դա անվանում են Արևմուտքում՝ «փափուկ տոտալիտարիզմի») դեմ: Սակայն վերադառնանք ԽՍՀՄ:

Հակախորհրդային այլախոհական շարժման կորիզը կազմում էին այն մտավորականները, որոնք ոչ միայն քննադատաբար էին գնահատում «կուսակցության և կառավարության» գործունեությունը, այլև իրենց մտքերը և մոտեցումներն արտահայտում էին նամակների, հոդվածների ձևով, իսկ 1960-ականների վերջից՝ անգամ բողոքի ցույցեր կազմակերպելով: Առաջին նման չարտոնված խոշոր ցույցը տեղի է ունեցել 1965թ. ապրիլի 24-ին Երևանում, Ցեղասպանության 50-րդ տարելիցի կապակցությամբ: Անշուշտ, այդ ակցիայի հիմնական դրդապատճառներն ազգային բնույթ էին կրում, սակայն այդ ժամանակահատվածում այլախոհական և ազգային շարժումները սերտաճել էին և միասնություն կազմել:

Չարտոնված ցույցի օրինակ է նաև 1968թ. օգոստոսի 25-ին Մոսկվայի Կարմիր հրապարակում կազմակերպված բողոքի ակցիան ընդդեմ խորհրդային զորքերի Չեխոսլովակիա մտնելու: Ինչպես հայտնի է, ԽՍՀՄ դաշնակից այդ սոցիալիստական երկրում սկիզբ էր առել հասարակական-քաղաքական շարժում (որը հետագայում ստացավ «Պրահայի գարուն» անվանումը)՝ համակարգային բարեփոխումներ, այդ թվում՝ տեղեկատվական ոլորտում, (մասնավորապես, ենթադրվում էր վերացնել գրաքննությունը) կատարելու նպատակով: Այդ գործընթացները կասեցվեցին 1968թ. օգոստոսի 21-ին իրականացված ԽՍՀՄ և նրա դաշնակիցների ռազմական միջամտության արդյունքում:

Այլախոհական պայքարը հիմնականում տեղեկատվական բնույթ էր կրում: Խորհրդային հանրությունում սկսեցին տարածվել ինչպես «Գլավլիտի» կողմից արգելված գեղարվեստական գրքեր, այնպես էլ զուտ տեղեկատվական բնույթի նյութեր: Այդ գրքերը և նյութերը, որոնք գլխավորապես բազմաց-

վում էին տպագրական մեքենաների և բավական պարզունակ այլ տեխնիկական սարքերի միջոցով[6], ստացան «Սամիզդատ» անվանումը: Հայտնի է, որ այդ անվանումն առաջին անգամ գործածության մեջ է դրել բանաստեղծ Ն.Գլազգովը, որին գրաքննությունն արգելում էր հրատարակվել պաշտոնական ամսագրերում: Սակայն դա չվիատեցրեց պոետին, և նա, իր մեքենագիր բանաստեղծությունների տիտղոսաթերթին տպագրելով *«Самсебеиздат»* (*ինքս ինձ հրատարակող*), սկսեց տարածել դրանք մտերիմների շրջապատում: 1960-ականների կեսերին այդ արտահայտությունը կրճատվեց, և շրջանառության մեջ մտավ «սամիզդատ» *(самиздат)* տերմինը:

«Լճացման» տարիներին մտավորական շրջանակներում մեծ պահանջարկ ունեին Ալ.Սոլժենիցինի, Մ.Բուլգակովի, Ալ.Զինովևի և այլ հեղինակների՝ «սամիզդատի» միջոցով տարածվող գրքերը: «Սամիզդատին» զուգահեռ՝ տարածվում էր նաև ամենազանազան խողովակներով ԽՍՀՄ ներթափանցած «տամիզդատը» *(«тамиздат»,* այսինքն՝ *այնտեղ,* նկատի ունենալով արտասահմանը, *հրատարակված*): Վերջինի միջոցով գլխավորապես տարածվում էին արևմտյան երկրներում տպագրված խորհրդային և օտարերկրյա հեղինակների գեղարվեստական (ինչպես, օրինակ, Բ.Պաստերնակի «Դոկտոր Ժիվագոն»), այնպես էլ հասարակական-քաղաքական ուղղվածության (օրինակ՝ Ռ.Կոնկվեստի «Մեծ ահաբեկչություն. 30-ականների ստալինյան բռնաճնշումները», Ա.Ավտորխանովի «Իշխանության տեխնոլոգիան» և «Ստալինի մահվան գաղտնիքը. Բերիայի դավադրությունը») գրքերը կամ, ավելի հաճախ՝ դրանց կրկնօրինակները:

Բացի այդ, ինչպես արդեն նշել ենք վերը, «սամիզդատ» եղանակով տարածվում էին տեղեկատվական բնույթի նյութեր, որոնցում ներկայացվում էին պաշտոնական մամուլում տեղ չգտած փաստերն այլախոհների գործունեության և այլ իրադարձությունների վերաբերյալ: Որպես առաջին նման տեղեկագիր համարվում է Ռ.Պիմենովի 1959թ. լույս տեսած «Ինֆորմացիան», իսկ առավել հայտնի էր *«Хроника текущих событий»*-ը *(«Ընթացիկ իրադարձությունների քրոնիկոնը»),* որը լույս էր տեսնում 1968–1983թթ.: Այդ քրոնիկոնի մի *«համարում»*, մասնավորապես, տեղեկություն է տրվում այլախոհ Հենրիխ Ալթունյանի դատավարության մասին:

[6] Տպագրության համար հաճախ օգտագործվում էր ծխախոտի գլանակների համար նախատեսված թուղթը (այսպես կոչված *«папиросная бумага»),* որը բարակ էր և թույլ էր տալիս պատճենող թղթերի միջոցով միանգամից տպագրել մինչև 6-7 օրինակ:

Միևնույն ժամանակ, խորհրդային համակարգի առանձնահատկություններից մեկն այն էր, որ բացի խիստ գաղափարականացված տարաբնույթ պաշտոնական հրապարակումներից և նույն «սամիզդատից» ու «տամիզդատից», հաճախ ստեղծվում և մեծ տպաքանակով հրատարակվում կամ նկարահանվում էին արժեքավոր ստեղծագործություններ, որոնք զգալի ազդեցություն էին գործում հասարակական տրամադրությունների վրա:

Օտարերկրյա ռադիոհաղորդումների դերակատարումը. Հարկ է փաստել, որ, չնայած այլախոհների և նրանց «տեղեկատվական արտադրանքը» տարածողների ջանքերին (նման գործունեության և անգամ «արգելված գրականության» ընթերցման համար մարդիկ ենթարկվում էին քրեական կամ վարչական հետապնդման), «սամիզդատը» և «տամիզդատը» մատչելի էին հանրության սահմանափակ շրջանակին: Այլընտրանքային տեղեկատվության հիմնական աղբյուրն օտարերկրյա ռադիոհաղորդումներն էին, որոնք բավական մանրակրկիտ լուսաբանում էին ոչ միայն քաղաքական գործընթացները, այլև այլախոհների գործունեությունը՝ ընթերցելով «սամիզդատի» և «տամիզդատի» բովանդակությունը:

Այստեղ կարևոր է հաշվի առնել, որ այլախոհական շարժումը զարգանում էր այսպես կոչված «Սառը պատերազմի» համատեքստում, որի կարևորագույն բաղադրիչն էր ագիտացիոն-պրոպագանդիստական հակամարտությունը: Տեղեկատվական գործողությունների ոլորտում առավել ակտիվ էին ԽՍՀՄ մրցակիցները, որոնք, մասնավորապես, կարողացան կազմակերպել տպավորիչ և արդյունավետ հակասովետական քարոզչություն «Ամերիկայի ձայն», «Ազատություն», *BBC*, «Գերմանական ալիք» և այլ ռադիոկայանների միջոցով: Տեղեկատվական այդ գործողություններում (ինչպես և այն ամենում, ինչը կապ ուներ այլախոհական շարժման հետ) կարևոր դերակատարում ունեին նաև հատուկ ծառայությունները:

Ռադիոպրոպագանդան ավելի քան ինտենսիվ էր. օրինակ, «Ամերիկայի ձայնի» ամենօրյա հաղորդումները ԽՍՀՄ ժողովուրդների տարբեր լեզուներով (այդ թվում՝ հայերենով) տևում էին մինչև 16.5 ժամ: Համաձայն որոշ գնահատականների, չնայած ռադիոհաղորդումների նկատմամբ կիրառվող տեխնիկական խլացումներին[7]՝ օտարերկրյա կայանների ծրագրերն ունկնդրում էր օրական մինչև մի քանի միլիոն մարդ:

[7] Ռադիոխլացման նպատակով կառուցվել էր մոտ 1400 հատուկ կայան:

Ռադիոլսողների շրջանակը լայն էր, «թշնամական ձայնը»[8] լսում էին ոչ միայն այլախոհները կամ տիրող կարգերի հանդեպ քննադատական տրամադրություններ ունեցողները, այլև սոցիալական գրեթե բոլոր շերտերի, որոնց թվում՝ «նոմենկլատուրայի» ներկայացուցիչները: Այս հանգամանքը հաշվի էր առնվում հաղորդումների պատասխանատուների կողմից, և ծրագրերի ստեղծման գործում ներգրավում էին ամենատարբեր ոլորտի մասնագետների՝ սոցիալ-հոգեբանների, գովազդի գիտակների և այլն: Բացի քաղաքական-տեղեկատվական թեմաներից, ռադիոծրագրերում հատուկ տեղ էին գրավում ամերիկյան և ընդհանրապես արևմտյան կենսակերպի ու մշակութային կյանքի վերաբերյալ հաղորդումները: Մասնավորապես, խորհրդային երիտասարդության մի հատվածը տարված էր ջազային երաժշտությամբ և առանձնակի ուշադրությամբ ունկնդրում էր այն հաղորդումները, որոնք վարում էր ջազի խոշոր գիտակ Ուիլիս Կոնովերը:

Գրականություն

1. *Конквест Р.*, «Большой террор» (в 2-х томах), Рига, Изд-во «Ракстниекс», 1991.
2. *Михаил Геллер, Александр Некрич,* «Утопия у власти: история Советского Союза с 1917 года до наших дней» (в 2-х томах), Printed in Germany by Poliglott – Druck GmbH, 1982 *(Տամիզդատ).*
3. *Алексеева Людмила,* «История инакомыслия в СССР», М., 1992. http://www.memo.ru/history/diss/books/ALEXEEWA/index.htm
4. *А.Авторханов,* «Загадка смерти Сталина», http://www.litmir.co/bd/?b=92144
5. *Борис Кагарлицкий, «*Политология революции», М., «Алгоритм», 2007.
6. *Шубин А.В., «*Тайны советской эпохи: диссиденты, неформалы и свобода в СССР», М., Вече, 2008.
7. *Արման Գալոյան,* Հայ «Սամիզդատ» մամուլի դերը Հայաստանի անկախացման գործընթացում, «Գլոբուս» վերլուծական հանդես, թիվ 7, 2012:
8. *Сергей Печуров,* Американская контрразведка в годы холодной войны, Независимое военное обозрение, #11(894), 2016.

[8] ԽՍՀՄ-ում օտարերկրյա հաղորդումները կատակով անվանում էին *«вражеский голос».*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԻԲԵՌԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Իրավիճակը 2016թ.

Սամվել Մարտիրոսյան[*]

Հայաստանում կիբեռանվտանգությունը դառնում է ազգային մակարդակի խնդիր: Հասարակությունն արագ տեմպերով մտնում է համացանց, շարժական կապի ներթափանցումը նույնպես շարունակում է աճել[1]: Հասարակությունը սկսում է օգտվել բազմաթիվ էլեկտրոնային, օնլայն բանկային ծառայություններից և այլն, ինչի շնորհիվ Հայաստանը դառնում է ավելի հրապուրիչ զանազան կիբեռհանցագործների համար:

Մյուս կողմից, Հայաստանում դեռևս չկա հստակ մոտեցում կիբեռանվտանգության վերաբերյալ ուսուցմանը: Ոչ միջնակարգ, ոչ բարձրագույն ուսուցումը չեն տալիս այն հմտությունները, որոնք պահանջված են այսօր: Չկան ծրագրեր՝ ուղղված կրթական տարիքից դուրս քաղաքացիների իրազեկմանը: Չկա ազգային մակարդակի իրազեկման կենտրոն, որը հանրությանը տեղյակ կպահեր կոնկրետ տվյալ պահին վերաբերող՝ լայն տարածում ստացած կիբեռվտանգների մասին: Այս ամենը Հայաստանի հասարակությունը դարձնում է բավական խոցելի կիբեռհարձակումների տեսանկյունից:

Սակայն գոյություն ունի հասարակության ինքնակազմակերպման գործոնը, ինչը հանգեցնում է իրավիճակի որոշակի բարելավմանը: Այսպես, դեռ 2012թ. Հայաստանն իսկապես կիբեռանվտանգության տեսանկյունից ամենախոցելի երկրներից մեկն էր: *Ըստ Kaspersky Lab* տվյալների, Հայաստանը երրորդ տեղում էր այն երկրների ցանկում, որտեղ ինտերնետից օգտվողներն ամենամեծ քանակի հարձակումների են ենթարկվում[2]: Իրավիճակը բացասական էր նաև 2013թ., Հայաստանը կրկին ամենավտանգավորների եռյակում էր[3]:

---

[*] «Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական կենտրոնի փորձագետ:

[1] Սամվել Մարտիրոսյան, Համացանցը Հայաստանում, 2016 թվականի ամփոփում, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=15344&sphrase_id=58069

[2] Սամվել Մարտիրոսյան, Հայաստանը դառնում է կիբեռխոցելի երկիր, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=6267&sphrase_id=58027

[3] Հայաստանը ամենավտանգավոր կիբեռտարածքներից է, Kaspersky Lab, http://www.banman.am/2013/12/Armenia-cyber-danger-Kaspersky.html

Եթե դիտենք նույն *Kaspersky Lab* զեկույցը 2016թ. վերաբերյալ, ապա ակնհայտ են դրական փոփոխությունները: Այսպես, վարակված համակարգիչների քանակով Հայաստանը միջին ռիսկայնության երկրների ցանկում է հայտնվել. վարակված է, ըստ հակավիրուսային լաբորատորիայի տվյալների, համակարգիչների 40,4%-ը, ինչը բավական լուրջ տոկոս է, սակայն ընդհանուր գլոբալ վիճակի տեսանկյունից մենք միջին դիրքեր ունենք:

Համացանցում վարակվելու ռիսկայնության տեսանկյունից Հայաստանը նույնպես դուրս է եկել ամենավտանգավոր երկրների տասնյակից և զբաղեցնում է 14-րդ տեղը՝ 33,01% ցուցանիշով (տե՛ս *Աղյուսակ 1*)[4]:

Աղյուսակ 1

Համացանցում հարձակման ենթարկվելու ամենամեծ ռիսկերն ունեցող երկրներն ըստ Kaspersky Lab-ի (տվյալ երկրում հարձակման ենթարկվող համակարգիչների տոկոսը)

1	Ռուսաստան	42,15%
2	Ղազախստան	41,22%
3	Իտալիա	39,92%
4	Ուկրաինա	39,00%
5	Բրազիլիա	38,83%
6	Ադրբեջան	38,81%
7	Իսպանիա	38,21%
8	Բելառուս	38,04%
9	Ալժիր	37,11%
10	Վիետնամ	36,77%
14	Հայաստան	33,01%

Իրավիճակի համեմատական բարելավումը դեռ չի նշանակում, թե կիբեռանվտանգության ոլորտն ազգային մակարդակով անհապաղ գործողությունների անհրաժեշտություն չի զգում: Խնդիրը ոչ միայն վտանգների քանա-

[4] KASPERSKY SECURITY BULLETIN 2016: СТАТИСТИКА https://kasperskycontenthub.com/securelist-russia/files/2016/12/KASPERSKY_SECURITY_BULLETIN_2016_Statistics_RUS.pdf

կական և ոչ միայն ինտերնետից օգտվողների աճն է, այլ նաև վտանգների որակական փոփոխությունը, ինչը պահանջում է պարբերական իրազեկում և նույնիսկ կրթում հանրային մակարդակով:

Այսպես, աշխարհում տարածում են գտնում այսպես կոչված կրիպտովիրուսները: Դրանք, ներթափանցելով համակարգիչ, կոդավորում են դրանում առկա ֆայլերն ու ապակոդավորման համար գումար պահանջում[5]: Տվյալ վիրուսների տեսակները կտրուկ աճում են ողջ աշխարհում: Եթե 2015թ. կրիպտովիրուսների միջոցով շորթված գումարի չափը գնահատվում էր մոտ $24 մլն, ապա 2016թ. այն արդեն հասավ $1 մլրդ-ի[6]:

Ընդհանուր վարակումների մեջ կրիպտովիրուսներն արդեն բավական մեծ տոկոս են կազմում: Հնդկաստանում, օրինակ, ամեն տասներորդ վարակված սարքը կրիպտովիրուս է պարունակում[7] (տե՛ս *Նկար 1*).

Նկար 1

Կրիպտովիրուսների վարակումը բոլոր վարակումների համեմատ, տոկոսներով, 2015-2016թթ. տվյալներով:



Տվյալները՝ Kaspersky Lab, պատկերը՝ Statista

[5] Կրիպտովիրուսներ. տարածումը, կանխումն ու բուժումը, http://vavati.am/AM/news/6-Cryptoviruses.html
[6] Ransomware: Now a Billion Dollar a Year Crime and Growing, http://www.nbcnews.com/tech/security/ransomware-now-billion-dollar-year-crime-growing-n704646
[7] KSN Report: PC ransomware in 2014-2016, https://securelist.com/analysis/publications/75145/pc-ransomware-in-2014-2016/

Հայաստանում իրավիճակը նույնպես մտահոգիչ է, սակայն քիչ ուսումնասիրված: Ըստ ինտերնետում իրականացված հարցման (իրականացվել է 2017թ. հունվարի 11-ին), Հայաստանում գտնվող՝ հարցման մասնակիցների 4,5%-ը հանդիսացել է 2016թ. կրիպտովիրուսների զոհ, ևս 1,3%-ը ոչ միայն վարակվել է, այլև վարակման է ենթարկվել նաև կազմակերպության համակարգիչը[8]: Բացի դրանից, հարցման մասնակիցներից 23%-ը տեղյակ է այլ անձանց կամ կազմակերպությունների մասին, որոնք հանդիսացել են կրիպտովիրուսների հարձակման զոհ (տե՛ս *Նկար 2*).

Նկար 2

Ինտերնետային հարցում Հայաստանում կրիպտովիրուսներով վարակումների մասին 2016թ. ընթացքում:



Տվյալներն՝ ըստ 744 հարցվողի

Նման վիճակագրությունները բավական մտահոգիչ են և նշանակում են, որ կիբեռհարձակումները ոչ միայն անձնական տվյալների արտահոսքի աղբյուր են, այլև սկսում են տնտեսական գործոն դառնալ Հայաստանում:

[8] Ինտերնետային հարցում Հայաստանում կրիպտովիրուսներով վարակումների մասին 2016 թվականի ընթացքում, https://docs.google.com/forms/d/e/1FAIpQLSdghL2HVSYnx7XI8jysmx4LOkEsmzuC1blmNJSMYRJbBn06sw/viewanalytics

ԼՂՀ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԳՈՏՈՒՄ ՀՐԱԴԱԴԱՐԻ ԽԱԽՏՄԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

2016թ. հունվար-սեպտեմբեր

Դավիդ Սարկիսյան*

Ժամանակակից աշխարհի հակամարտությունների շարքում արցախյան հակամարտությունն առանձնահատուկ է նրանով, որ լայնածավալ պատերազմական գործողությունների բացակայության պայմաններում տարիներ շարունակ շփման գծի երկայնքով գրեթե ամենօրյա պարբերությամբ տեղի են ունենում հրադադարի ռեժիմի խախտումներ: Ազդվելով ներքին և արտաքին մի շարք գործոնների կողմից՝ այդ խախտումներն ունենում են տարբեր ինտենսիվություն թե՛ քանակական և թե՛ որակական բնութագրիչների տեսանկյունից: Քանակական իմաստով մեկ օրվա ընթացքում արձանագրված խախտումների և հրաձգային զենքից արձակված կրակոցների թիվը պարբերաբար տատանվում է: Հետաքրքրական է, որ այդ տատանումները չեն կրում պատահական բնույթ, այլ ժամանակի ընթացքում կազմում են որոշակի միտումներին բնորոշ օրինաչափություններ: Որակական տեսանկյունից խախտումները տարբերվում են կիրառվող զինատեսակների իմաստով՝ հրաձգային զենքից մինչև ծանր հրետանի, տանկեր և անօդաչու թռչող սարքեր:

Զինադադարից հետո հակամարտության պատմության մեջ բացասական իմաստով առանձնացավ 2016 թվականը, երբ տեղի ունեցավ 1994-ից ի վեր խոշորագույն էսկալացիան, որը մեդիա- և որոշ չափով նաև փորձագիտական դաշտում ստացավ «ապրիլյան քառօրյա պատերազմ» անվանումը: Միջազգային հարաբերությունների քանակական հետազոտություններում ընդունված է պատերազմ որակել այն ռազմական գործողությունները, որոնց ընթացքում կողմերի հանրագումարային զոհերի թիվը գերազանցում է հազարը[1] (ինչը տեղի չունեցավ ապրիլին): Հակառակ դեպքում ռազմական գործողությունները որակվում են «միջպետական ռազմականացված ընդհարում/վեճ» (*militarized interstate*

* «Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի ավագ փորձագետ, ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ասպիրանտ:

[1] *Jones, D. M., Bremer, S. A. & Singer, D. J.*, 1996. Militarized Interstate Disputes 1816-1992: Raionale, Coding Rules and Empirical Patterns. *Conflict Management and Peace Science*, Volume 2, pp. 163-215, http://cow.la.psu.edu/COW2%20Data/WarData_NEW/COW%20Website%20-%20Typology%20of%20war.pdf

dispute): Սակայն ղարաբաղյան հակամարտության պարագայում, անկախ անվանումից, 2016թ. ապրիլի 2-5-ը տեղի ունեցած ռազմական գործողությունները որակապես տարբերվում էին հրադադարի նախկին խախտումներից թե՛ կիրառված ռազմական ներուժի, թե՛ դրված մարտական խնդիրների տեսանկյունից:

Սույն հոդվածում կներկայացնենք ապրիլյան էսկալացիային նախորդող և հաջորդող ամիսներին (2016թ. հունվար-սեպտեմբեր) ԼՂ հակամարտության գոտում ադրբեջանական կողմի իրականացրած՝ հրադադարի ռեժիմի խախտումների դինամիկայի համառոտ վիճակագրական ակնարկը: Բոլոր տվյալները վերցված են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Պաշտպանության նախարարության պաշտոնական կայքից[2]:

Նախ կարելի է արձանագրել, որ վերոնշյալ ժամանակահատվածում հրաձգային զինատեսակներից բացի ադրբեջանական կողմն առավել հաճախ կիրառել է տարբեր տեսակի ականանետեր և նռնականետեր: *Գծապատկեր 1*-ում ուղղահայաց գծերը համապատասխանում են յուրաքանչյուր օրվան, երբ կիրառվել են այդ զինատեսակները: Այն օրերին, երբ տվյալ զինատեսակը չի կիրառվել, համապատասխանում է գծապատկերի վրա բաց տարածությանը (բացակայում են ուղղահայաց գծերը):

Գծապատկեր 1

Ականանետերի և նռնականետերի կիրառությամբ հրադադարի խախտումներ[3]



[2] Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Պաշտպանության նախարարություն, պաշտոնական կայքէջ, նորություններ, http://www.nkrmil.am/

[3] Այս և հաջորդ գծապատկերները կառուցված է ըստ ԼՂՀ ՊՆ պաշտոնական տվյալների:

Այս իմաստով ադրբեջանական կողմն առավել մեծ ակտիվություն է ցուցադրել տարվա առաջին կեսին և հատկապես ապրիլյան պատերազմին հաջորդած օրերին՝ ապրիլ-մայիս ամիսներին: *Գծապատկեր 2*-ում կապույտ, կարմիր և դեղին գծերի միջոցով ներկայացված են համապատասխանաբար գնդացրի, ծանր հրետանու և տանկի ու հետևակի մարտական մեքենայի կիրառությամբ հրադադարի խախտումներին համապատասխանող օրերը: Վերջին երկու զինատեսակներն առավել հաճախ կիրառվել են ապրիլին: Գնդացրի կիրառության տեսանկյունից նկատելի է որոշակի քլաստերացում՝ կիրառությունը տեղ է գտնում մի քանի միմյանց հաջորդող օրերի ընթացքում, այլ ոչ թե հավասարաչափ բաշխված է ըստ պատահական օրերի: Սրանից կարելի է նախնական ենթադրություն անել, որ որևէ օր գնդացրի կիրառության արձանագրման դեպքում կարելի է ակնկալել, որ դրան հաջորդող օրերին ադրբեջանական կողմը կկիրառի գնդացիր ավելի մեծ հավանականությամբ, քան տարվա մյուս կամայական օրերին:

Գծապատկեր 2

Գնդացիրների, ծանր հրետանու, տանկերի և ՀՄՄ-ների կիրառությամբ հրադադարի խախտումներ



Հետախուզա-դիվերսիոն գործողությունների իրականացման օրերը պատկերված են *Գծապատկեր 3*-ում: Դիտարկվող ժամանակահատվածում դրանց մեծամասնությունը տեղի է ունեցել հունվար-ապրիլ ամիսներին: Նման գործողությունների իրականացումն ապրիլյան պատերազմի նախօրեին տրամաբանական է այն առումով, որ ադրբեջանական կողմը նպատակ է հետապնդել նախատեսվող հարձակումից առաջ որոշակի հավելյալ տեղեկատվություն հավաքել հայկական պաշտպանական համակարգի վերաբերյալ: Իր հերթին, ապրիլին հետախուզա-դիվերսիոն բարձր ակտիվությունը կարող էր պայմանավորված լինել նրանով, որ նույնիսկ քառօրյա պատերազմի ավարտից հետո շարունակվում էին ինտենսիվ սահմանային մարտերը, և ադրբեջանական կողմը կիրառել է տարբեր տեսակի ծանր հրետանի ապրիլի վերջին, ինչպես երևում է *Գծապատկեր 2*-ից: Ուստի, *Գծապատկեր 3*-ում ներկայացված՝ ապրիլի սկզբին և կեսերին տեղի ունեցած հետախուզա-դիվերսիոն գործողությունները կարող էին հանդիսանալ նման հրետանային հարվածների նախապատրաստությունը:

Գծապատկեր 3

Հետախուզա-դիվերսիոն գործողություններ



Ամենից հաճախ հրադադարի ռեժիմի խախտումները տեղի են ունենում հրազենային զենքի կիրառությամբ: *Գծապատկեր 4*-ում ներկայացված է ադրբեջանական կողմի՝ հրաձգային զենքից արձակված օրական կրակոցների քանակի դինամիկան:

Գծապատկեր 4

Տարբեր տրամաչափի հրաձգային զինատեսակներից արձակված կրակոցների թիվը



Գծապատկերի ընդհատումները համապատասխանում են այն օրերին, երբ Պաշտպանության նախարարության կայքում չի արձանագրվել կրակոցների կոնկրետ թվաքանակը: Հիմնականում այդ օրերին նշվել է, որ «պահպանվել է հարաբերական անդորր»:

Բացառելով ապրիլյան պատերազմի օրերը՝ 2016թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին ադրբեջանական կողմը հրաձգային զինատեսակներից օրական արձակել է միջինը 737 կրակոց: Մեկ օրվա ընթացքում առավելագույնը արձակվել է 4500 կրակոց, նվազագույնը՝ 0: Ստանդարտ շեղումը կազմել է 703:

Փետրվարի 12-ին և մարտի 11-ին, որոնք համապատասխանում են գծապատկերում ներկայացված երկու ամենաբարձր գագաթներին, հարակից օրերի համեմատությամբ գրանցվել է կրակոցների արտասովոր բարձր քանակ: Ըստ մեզ՝ պատահական (ստոխաստիկ) բաղադրատարր ունեցող այնպիսի գործընթացներում, ինչպիսիք են սահմանային մարտերը, նման հազվադեպ շեղումները հնարավոր են պատահականության և մարդկային գործո-

նի ազդեցության պայմաններում: Հասարակական գործընթացների վիճակագրության մեջ ընդունված է նման արտասովոր և փոքրաթիվ շեղումների բացառումը հետագա վերլուծությունից՝ միտման ընդհանուր պատկերը չաղավաղելու նպատակով: Այսպիսով, եթե բացառենք փետրվարի 12-ին և մարտի 11-ին տեղի ունեցած իրավիճակի սրացումները, ապա կարելի է նկատել, որ հրաձգային զենքից արձակված կրակոցների դինամիկան տարվա սկզբից մինչև բուն «ապրիլյան պատերազմը» ուներ աստիճանական աճի միտում, ինչը վկայում է առաջնագծում իրավիճակի հետևողական սրման մասին:

Մաթեմատիկորեն այս միտումը լավագույն ձևով ապրոքսիմացվում է էքսպոնենցիալ կախման բանաձևով, որի դեպքում ստացվում է ավելի բարձր R^2 արժեք, քան բանաձևի կիրառման դեպքում:

Գծապատկեր 5

Հունվարի 1-ապրիլի 1 տարբեր տրամաչափի հրաձգային զինատեսակներից արձակված կրակոցների թվի էսկալացիայի միտումը



Գծապատկեր 5-ում կապույտ գույնով պատկերված են զեկուցված արժեքները, իսկ սև գույնով ավելացված է միտման կորը:

R^2-ը ցույց է տալիս կախյալ փոփոխականի վարիացիայի մասնաբաժինը, որը բացատրվում է մոդելի մեջ ընդգրկված անկախ փոփոխականներով: 0 արժեքը նշանակում է, որ մոդելն ընդհանրապես չի բացատրում մեզ հետաքրքրող կախյալ փոփոխականի վարիացիան իր միջին արժեքի շուրջը, իսկ 1 արժեքի դեպքում մոդելն ամբողջությամբ բացատրում է այն:

Թեպետ էքսպոնենցիալ կախման R^2-ի 0,47 արժեքը իդեալական չէ, բայց հասարակական գիտություններում մեկ փոփոխականից, տվյալ դեպքում՝ ժամանակից եղած կախումը բնութագրելու համար բավարար բարձր է:

Նշենք, որ դիտարկվող ժամանակահատվածի՝ 2016թ. հունվար-սեպտեմբեր, ոչ մի այլ եռամսյա շրջանում չի արձանագրվել կրակոցների թվաքանակի դինամիկայի էքսպոնենցիալ աճ: Սա ինքնին հետաքրքրական փաստ է, ինչից կարելի է ենթադրել, որ ապագայում նման երկարատև ժամանակահատվածում կրակոցների թվի էքսպոնենցիալ աճի դիտարկումը կարող է ազդանշան ծառայել մեկ այլ հնարավոր կարճատև պատերազմի սկսման համար:

Այսպիսով, հոդվածում կարճ վիճակագրական ակնարկի տեսքով ամփոփվել են 2016թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին ԼՂ հակամարտության գոտում ադրբեջանական կողմի իրականացրած հրադադարի խախտման դեպքերը: Առանձնացվել են որոշակի միտումներ՝ կապված որոշակի զինատեսակների կիրառման, հետախուզա-դիվերսիոն գործողությունների իրականացման և խախտումների ինտենսիվության դինամիկայի վերաբերյալ:

ԲՈՒԼՂԱՐԻԱՆ ՓՈԽՈՒՄ Է ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄԸ

Գեորգի Կոլարով[*]

Բուլղարիայի նախագահական ընտրություններում հաղթանակ է տարել ընդդիմադիր Բուլղարական սոցիալիստական կուսակցության (ԲՍԿ) առաջադրած զույգը՝ գեներալ-մայոր, երկրի ՌՕՈՒ նախկին հրամանատար Ռումեն Ռադևը և եվրապատգամավոր, լրագրող Իլիանա Յոտովան: Երկրորդ փուլում նրանք մոտ 59% ձայն հավաքեցին:

Հետաքրքրական է, որ ընտրություններում սոցիալ-դասային տարբերությունները ոչ մի դեր չխաղացին: Խոսքն առաջին հերթին այն մասին էր, թե հետագայում ում հետ է ընթանալու Բուլղարիան՝ Ռուսաստանի՞, թե՞ Արևմուտքի: ԵՄ ամենաաղքատ երկրի բուլղարական, ուղղափառ ծագմամբ քաղաքացիները բաժանվում են ռուսամետների, եվրոպամետների կամ ամերիկամետների: (Մուսուլմանական փոքրամասնությունները հիմնականում կողմնորոշված են դեպի Թուրքիա: Բուլղարախոս մուսուլմանները իսլամական ֆունդամենտալիզմի ոգով հոգեբանական մշակման են ենթարկվում արաբական երկրների միսիոներների կողմից: Սակավաթիվ շիա ալիանները հայացքը հառել են Իրանի կողմը): Սոցիալական ոչ մի շերտ անտարբեր չէ հանրապետության աշխարհաքաղաքական կողմնորոշման հանդեպ:

Նախագահի հիմնական թեկնածուները հիմնականում միանման սոցիալ-տնտեսական ծրագրեր էին ներկայացրել: Ձայների զգալի քանակություն հավաքած թեկնածուների մեջ չկային արմատականներ սոցիալ-տնտեսական և ֆինանսական ոլորտներում, ոչ ձախերի, ոչ աջերի մեջ: «Ձախ» և «աջ» հասկացությունները գրեթե լիովին կորցրել են իրենց բովանդակությունը երկրում նախկին կուսակցական չինովնիկների՝ խոշոր կապիտալիստների վերածվելու ֆոնին: Թոդոր Ժիվկովի պաշտոնանկությունից հետո կուսակցական փողերի վերաբաշխումը ոչնչացրեց սոցիալիստական իդեալների

[*] Քաղաքական գիտությունների թեկնածու, Ժողովուրդների բարեկամության Ռուսաստանի ինստիտուտի դոկտորանտ, Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանի (Երևան) և Տնտեսագիտական համալսարանի (Վառնա) դասախոս:

մնացուկները: Կոմունիստների թիվն արագ նվազում է կենսաբանական պատճառներով: Երիտասարդության շրջանում դժվար է իսկական ձախեր գտնել: Երիտասարդ ձախեր չես համարի ԲՍԿ և «Բուլղարական վերածննդի այլընտրանք»-ի (ԲՎԱ) ձախ ակտիվիստներին, որի ղեկավար կազմից հունվարի 15-ին հեռանալու են նախկին նախագահ Գեորգի Պիրվենովը (2002-2012թթ.) և նախկին փոխվարչապետեր Իվայլո Կալֆինն ու Ռումեն Պետկովը: Արդեն հայտնի է, որ ԲՎԱ նախագահի և փոխնախագահի նրանց տեղերը զբաղեցնելու են երիտասարդ, եռանդուն ակտիվիստներ: Դժվար է համաձայնել, թե նրանք «ձախեր» են. նրանք հիմնականում արդյունավետ մենեջերներ են բիզնես-հաղորդակցությունների ոլորտում, որը ձախ հայացքներ չի նախատեսում:

Եթե Ռումեն Ռադևը և Իլիանա Յոտովան արդեն հաղթել են, կարելի է սպասել Ռուսաստանի Դաշնության դեմ պատժամիջոցների մեղմացման կամ չեղարկման փորձերի, ինչպես նաև նոր խոսակցությունների «Հարավային հոսք» նախագծի վերսկսման մասին (թեև Դ.Պեսկովը մամուլի ասուլիսում հատուկ հայտարարեց, որ դրա հնարավորությունը նվազագույն է): Դա, իհարկե, դուր չի գա բրյուսելյան եվրաբյուրոկրատներին և վաշինգտոնյան քաղաքական «հրահանգիչներին»: Դրա փոխարեն մոսկովյան ԶԼՄ-ում վերջին շաբաթներին նկատելի է խանդավառությունը Բուլղարիայի հնարավոր վերակողմնորոշման առումով: Սրա հետ կապված՝ Իվայլո Կալֆինը (նախագահի թեկնածուներից մեկը) հրապարակավ հարց է ուղղել Ռումեն Ռադևին, թե ինչու նա չի արձագանքում այդ տեղեկություններին և Ռուսաստանում առկա այդ մտայնություններին: Կալֆինը 4%-ից քիչ ձայն էր հավաքել ընտրությունների առաջին փուլում, ինչն էլ պատճառ էր հանդիսացել, որպեսզի նա դուրս գա քաղաքականությունից (ոչ միայն նա, այլև նրա կուսակիցներ Գեորգի Պիրվանովն ու Ռումեն Պետկովը): ԲՍԿ, ԲՎԱ և բուլղարական պետության նախկին առաջնորդները որոշել են իրենց տեղը զիջել երիտասարդ կուսակցական կադրերին:

Պետք է նկատի ունենալ, որ ժամանակին Ռումինիան և Բուլղարիան ԵՄ և ՆԱՏՕ ընդունվեցին բացառապես աշխարհաքաղաքական նկատառումներով: Նրանց հետամնաց տնտեսությունը, ավերված ենթակառուցվածքը, քաղաքացիների աշխատանքային սովորությունները հեռու էին եվրատլանտ-

յան ընկերակցության չափորոշիչներից: Երկու երկրներն էլ Եվրոպայից և ԱՄՆ-ից դոտացիաներ են ստանում: Այդպես կլինի նաև Ռադևի և Յոտովայի հաղթանակից հետո:

Այս առիթով հայտնի սերբ քաղաքագետ Վիոլետա Տալովիչը Միջազգային հետազոտությունների ռուսաստանյան ասոցիացիայի 10-րդ համաժողովում ընդհանրացում է արել՝ ասելով, որ «մեր ընտրանու մի մասը դեռևս հավատում է, որ մենք կարող ենք ապրել ինչպես Արևմուտքում», նկատի ունենալով ոչ միայն Սերբիան, այլև ամբողջ Բալկանները: Սլավոնական-ուղղափառ քաղաքակրթությունում ներառված լինելով՝ նրանց ճանապարհը դեպի Եվրոպա միշտ միակցվելու է բյուզանդականության և ռուսաֆիլության ավանդույթի հետ:

Ընդդիմադիր թեկնածուի հաղթանակը ստիպել է հեռացող իշխանություններին, կոնկրետ՝ հրաժարական տված վարչապետ Բոյկո Բորիսովին, անսալ ռուսամետ քաղաքական գործիչների և որ գլխավորն է՝ հանրային կարծիքին: Գաղտնիք չէ, որ Բուլղարիայի քաղաքացիների ավելի քան երկու երրորդը համակրում է ռուսներին և հանդես է գալիս բոլոր հնարավոր ուղղություններով հարաբերությունների զարգացման օգտին: Այս մասին լավ գիտեն թե՛ Բրյուսելում, թե՛ Վաշինգտոնում: Հետխորհրդային տարածքից դուրս եվրոպական որևէ այլ վայրում ռուսալեզու այդքան բնակչություն չկա, որքան այստեղ: Այն ավելանում է ի հաշիվ երկրում անշարժ գույք գնող ռուսների: Եթե լեզվական խոչընդոտ չկա, գնորդներն իրենց հարմարավետ են զգում բնակության նոր երկրում: Բացի նրանցից, Բուլղարիայում ապրում են նաև հնադավանների, սպիտակ էմիգրանտների հետնորդները, զինված հակամարտությունների շրջանում նախկին խորհրդային հանրապետություններից տեղափոխվածներ, որոնց թվում շատ են հայերը:

ԲՍԿ կուսակցական բարձրագույն խորհրդի վերջին լիագումար նիստում (մինչև ընտրությունները) նոր նախագահ, գեներալ-մայոր Ռումեն Ռադևը կարողացավ հաղթահարել ներկուսակցական ընդդիմախոսների և անկախ ձախ մտավորականության դիմակայությունը: Նրա անկախ քաղաքացիական դիրքորոշումը, բարձր պաշտոնը և բարձր աշխատավարձը կորցնելու ռիսկին դիմելու պատրաստականությունը գրավում են կուսակցության անդամներին և կողմնակիցներին: Բայց բուլղար սոցիալիստները՝ նախկին կոմունիստները, առանց այդ էլ քվեարկել էին նրա օգտին: Նրանք վարժվել են

չքննարկել կուսակցական ղեկավարության որոշումները: ԲՍԿ-ն պառակտող ներքին կոնֆլիկտները կուսակցական ղեկավարությունում վաղուց ձանձրացրել են նրանց, ովքեր անկեղծորեն հավատում էին կոմունիզմին: Եվ նրանք հետզհետե անցնում են ընդդիմադիր այլ դիրքերի և պաշտպանում այլ կուսակցությունների:

Գեներալ-մայոր Ռումեն Ռադևը չկարողացավ, սակայն, հաշտեցնել ներկայիս անհաշտ կուսակցական առաջնորդներին նախկինների հետ, որոնք հիմնել էին նշանակությամբ երկրորդ ձախ կուսակցությունը երկրում՝ Բուլղարական վերածննդի այլընտրանքը: Արդյունքում՝ գեներալ-մայորն առաջին փուլում զրկվեց ընտրողների առնվազն 4%-ի աջակցությունից, որոնք ստացավ նախկին արտգործնախարար, նախագահի թեկնածու, եվրապատգամավոր Իվայլո Կալֆինը: Նա և նախագահի մեկ այլ թեկնածու՝ լրագրող, դիվանագետ, հետախուզության գնդապետ Վելիզար Ենչևը այն ձախ թեկնածուներն էին, ովքեր չէին ստում իրենց խոստումների հարցում: Ուստի այդքան քիչ ձայներ ստացան. ձախ ընտրողները Բուլղարիայում բավական միամիտ են: Եվ այնուամենայնիվ, գլխավորն այն է, որ Ռումեն Ռադևն այնուամենայնիվ համոզիչ հաղթանակ տարավ:

Ռադևին կասկածում են ռուսամետ կողմնորոշման և «Գազպրոմի», «Ռոսնեֆտի», «Ռոսատոմի» հետ ունեցած կապերի մեջ: Նա կյանքի մեծ մասն անցկացրել է բուլղարական բանակում: Վերլուծաբանները ենթադրում են, որ պրոֆեսիոնալ զինվորականը (Բուլղարիայի ՌՕՈ լավագույն օդաչուներից մեկն է) կկարողանա հանրապետությունը շրջել դեպի Ռուսաստանի Դաշնության հետ տնտեսական և առաջին հերթին՝ էներգետիկ համագործակցության պահպանման և զարգացման հուն: Թեև մինչև Թ.Ժիվկովի պաշտոնանկությունը՝ 10.11.1989թ., նա կուսակցական պաշտոններ զինված ուժերում չի զբաղեցրել և խորհրդային ռազմաուսումնական հաստատություն չի ավարտել:

Նախագահի և փոխնախագահի պահպանողական աջ թեկնածուները, որոնք, հասկանալի է, եվրոպամետ և ամերիկամետ են, ընտրություններից հետո չեն խորշում դատապարտել բուլղար ժողովրդին և Մոսկվային մեղադրել «հիբրիդ պատերազմ» վարելու մեջ: Բուլղարիայում արդեն քչերն են ուշադրություն դարձնում նրանց վրա: Բայց ԵՄ երկրներում, ԱՄՆ-ում և Կանադայում նրանք լուրջ մոբիլիզացիոն պոտենցիալ ունեն. բուլղար շատ երիտասարդներ ապրում են Արևմուտքում:

Իշխող՝ «Քաղաքացիները հանուն Բուլղարիայի եվրոպական զարգացման» (ՔՀԲԵԶ) կուսակցությունում նույնպես, կրած պարտությամբ պայմանավորված, ներքին խմորումներ են սկսվել, որոնք հանգեցրել են որոշ կարևոր պաշտոններից հրաժարականների: Վարչապետ, գեներալ-լեյտենանտ Բոյկո Բորիսովը՝ կուսակցության խորհրդանիշը, առանց որի անհնար է անգամ պատկերացնել այդ կուսակցությունը, պահեց խոսքը և հրաժարական տվեց անմիջապես երկրորդ փուլից հետո: Նրա կառավարությունն առայժմ կատարում է իր գործառույթները: 2017թ. հունվարի 20-ից հետո (այդ օրը նոր նախագահ Ռումեն Ռադևը կստանձնի պաշտոնը) սպասվում է ծառայողական կառավարության ձևավորում, իսկ գարնանը՝ խորհրդարանական ընտրություններ (չորրորդը վեց տարում): Դրանց անցկացման հավանական օրը 2017թ. ապրիլի 2-ն է:

Քվեարկության ելքը վճռեցին նացիոնալ-հայրենասիրական կուսակցությունների ընտրողները: Դրանցից երկուսը՝ Ներքին Մակեդոնական հեղափոխական կազմակերպությունը (ՆՄՀԿ) և Բուլղարիայի փրկության ազգային ճակատը (ԲՓԱՃ) 2014թ. աշնանից կոալիցիոն ձևաչափով ներկա են խորհրդարանում: Նրանց Հայրենասիրական միությունը (ՀՄ) թվաքանակով հինգերորդն է խորհրդարանում: Ցայժմ աջակցում էին կառավարությանը: Նախագահական ընտրություններում ընդհանուր հաղթանակի համար նրանց միացավ ծայրահեղ ազգայնական և ռուսամետ «Ատակա» կուսակցությունը (Վաշինգտոնի և Բրյուսելի լոբբիստներն այն անվանում են «Ռուս նացիոնալիստների կուսակցություն»): Արդեն հասկանալի է, որ ՀՄ ամենաբարձրաստիճան ներկայացուցիչը՝ սփյուռքի նախարար, ՆՄՀԿ ակտիվիստ Բորիս Վանգելովը կմասնակցի նաև ծառայողական կաբինետի աշխատանքներին: Հայտնի է նաև, որ եռակուսակցական կոալիցիան կպահպանվի մինչև գարնանը կայանալիք խորհրդարանական ընտրություններ: Համենայնդեպս, այդպես են հայտարարում դրանց երեք ղեկավարները (թեև նրանք անձնական, այլ ոչ թե գաղափարական բազմաթիվ տարաձայնություններ ունեն միմյանց հետ)... Հայ ընթերցողները կարող են, սակայն, համոզված լինել, որ Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության ճանաչման, ԼՂՀ պատերազմի, Երևանի ու Ստեփանակերտի և Սոֆիայի ու Սկոպիեի միջև հարաբերությունների հարցերում նրանք միակարծիք են:

Նացիոնալ-հայրենասերներն օգտվեցին առաջին փուլում ունեցած իրենց բարձր արդյունքից (15%) և նախաձեռնեցին Բուլղարիայի տարածքում միգրանտներին բնակեցնելու լիակատար արգելքի մասին օրենքի ընդունումը (ընդունվելու հավանականությունը բավական մեծ է. բուլղարական այն կուսակցությունը, որը դրան չի աջակցի, կկորցնի իր անդամների և կողմնակիցների մեծամասնության վստահությունը:) Ներգաղթողների հոսքը գործնականում կանխորոշեց ընտրությունների ելքը: Ռադևը և Յոտովան կողմնակից չեն փախստականներին ընդունելուն: Այս առումով Ռադևի հռետորաբանությունը հիշեցնում է Թրամփին: Ուստի, երկրորդ փուլում ստացավ նացիոնալ-հայրենասերների ձայները: Էթնիկ բուլղարները համակարծիք են Մերձավոր և Միջին Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի մուսուլմաններին Բուլղարիայում բնակեցնելը մերժելու հարցում: Երկրում արդեն հաստատվել է ավելի քան 7000 ներգաղթյալ, նրանց ներկայացուցիչների կողմից իրականացված սպանությունները, բռնաբարությունները, գողություններն ու խուլիգանությունները համախմբում են բուլղարներին: Ամեն օր ցույցեր են տեղի ունենում ներգաղթի դեմ: Նրանց դեմ անաղմուկ ժողովրդական աշխարհազոր է ստեղծվում, որոնցում հիմնականում ներգրավվում են նախկին ուժայինները, ինչպես նաև երիտասարդները: Նրանք բոլորը նախկին մարզիկներ են և թեթև զինատեսակների ու սառը զենքի հետ վարվելու մեծ փորձ ունեն: Նրանք բռնում են անլեգալ ներգաղթյալներին և վերադարձնում թուրքական կողմ՝ երբեմն պարզապես բռնի նետելով սահմանից այն կողմ: Այսպիսով նրանք հրահրում են թուրք սահմանապահներին՝ դիմելու պատասխան գործողությունների, ինչը ցանկացած պահի կարող է վերաճել ծանր միջադեպի՝ երկկողմ հարաբերությունների համար լուրջ հետևանքներով: Այս առումով երկիրն ընթանում է դեպի Վիշեգրադյան քառյակի կողմը: Վիկտոր Օրբանի, Միլոշ Զեմանի, Ռոբերտ Ֆիցոյի հետ Բոյկո Բորիսովի բարեկամական հարաբերություններն արագացրել են նրանց մերձեցումը: Ենթադրվում է, որ Ռումեն Ռադևը նույնպես կկարողանա ընդհանուր լեզու գտնել վերոնշյալ բարձրաստիճան անձանց հետ: Սակայն կա մի բացառություն. ով էլ որ նախագահ կամ վարչապետ լինի Վարշավայում, ուրախ չի լինի, որ շուտով չեղարկվելու է լեհական ռազմական գործարաններում բուլղարական ՄԻԳ-երի վերանորոգման մասին պայմանագիրը: Նորոգումն, այնուամենայնիվ, իրականացնելու է ռուսաստանյան արտադրող կոնցեռնը: Իսկ լեհերը հսկայական փողեր

կկորցնեն: Բայց գեներալ-մայոր Ռ.Ռադևը բուլղարների մեծամասնության համակրանքը շահել է հենց շնորհիվ իր վճռականության ՄԻԳ-երի նորոգման հարցում. ՌՕՈ նախկին հրամանատարն առաջին անգամ հրաժարական տվել է հենց այդ առիթով: Այն ժամանակ հրաժարականը չընդունվեց: Երկրորդ անգամ հրաժարական տվեց օտար ինքնաթիռներով (ՆԱՏՕ այլ պետությունների օդաչուների կողմից) բուլղարական երկնքի պաշտպանության հեռանկարի առիթով:

Ռ.Ռադևի հաղթանակով է նաև պայմանավորված այն, որ գլխավոր դատախազությունը երեք գործ է հարուցել հեռացող կառավարության պաշտպանության նախարար Նիկոլայ Նենչևի դեմ. լեհական ռազմական նախարարության հետ անիրավաչափ պայմանագրի, «ՄԻԳ» կոնցեռնի հետ պայմանագիրը փակելու և չարաշահումների համար: Մեծ է հավանականությունը, որ նա կբանտարկվի երկար ժամանակով: Պատասխանատվության կկանչվի նաև լեհական կողմը: Առայժմ դժվար է կռահել, թե այդ գործընթացն ինչպես կանդրադառնա երկկողմ հարաբերությունների վրա: Համենայնդեպս, Վարշավայի և Սոֆիայի միջև հարաբերությունների սառեցումից հազիվ թե հնարավոր լինի խուսափել:

Բուլղարիայի անցումային շրջանի ամենահաջողակ քաղաքական գործիչը՝ 10 տարի շարունակ (2002-2012թթ.) Բուլղարիայի Հանրապետության նախագահ Գեորգի Պիրվանովը, ընտրությունների արդյունքները որակել է որպես «պայմանավորված խաղ»: Այն իմաստով, որ Բոյկո Բորիսովն ինքն էր ուզում նախագահի պաշտոնը զիջել ընդդիմությանը և դրա համար առաջադրեց նախապես չընտրվող թեկնածուի: Այս առիթով Մոսկվայի Միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտի բալկանագետ ուսանողները (որոնց տողերիս հեղինակը դասախոսություններ է կարդում Բուլղարիայի արդի քաղաքական պատմության մասին) պարապմունքներից մեկի ժամանակ հարցրին. կարո՞ղ է արդյոք Ժերար Դեպարդիեին հիշեցնող այդ կինը դառնալ հանրապետության նախագահ, անգամ եթե նրան առաջադրել է ինքը՝ Բոյկո Բորիսովը: Պարզվեց, որ ոչ: Հրաժարական տված վարչապետը գործնականում հաստատեց նախագահ Պիրվանովի խոսքերը՝ վերաձևակերպելով քրիստոնեական իմաստությունը. «Մի ցանկացիր մերձավորիդ կնոջը, քանզի նա կարող է իրականում քոնը դառնալ: Գեներալ Ռադևն ինքն ուզեց նախագահ դառնալ, և Աստված նրան հաղթանակ շնորհեց: Տեսնենք, թե ինչ-

պես է հիմա բարձրացնելու թոշակները, պատ կառուցելու թուրքական սահմանին և մեկնելու Ղրիմ»:

Ղրիմի հետ կապված՝ գեներալ-մայոր Ռադևն արդեն պատասխանել է գեներալ-լեյտենանտ Բորիսովին. «Ի՞նչ դրոշ է ծածանվում Ղրիմի վրա: Ուկրաինակա՞ն, թե՞ ռուսական»: Թեև նա հիշատակել է, որ Ղրիմի վերամիավորումը Ռուսաստանի Դաշնությանը «միջազգային իրավունքի խախտում է», բայց հիշեցրել է Ֆրանսիայի նախկին նախագահ Վալերի Ժիսկար դ'Էսթենի խոսքերը, թե՝ «Ղրիմը միշտ ռուսական է եղել», ու կոչ է արել ապագայում ղեկավարվել այդ իրողությամբ: Նրա կարծիքով՝ ԵՄ-ը և ՆԱՏՕ-ն վաղ թե ուշ պետք է հասկանան, որ Ռուսաստանը Եվրոպայի մի մասն է հանդիսանում և առանց նրա չի կարելի լուծել ռազմավարական ոչ մի խնդիր: Ռումեն Ռադևը հարցրել է դեռևս արտգործնախարարի պաշտոնը զբաղեցնող և մոլի ռուսատյաց Դանիել Միտովին. «Ո՞ր դեսպանատուն կգնա Դանիել Միտովը վիզայի համար, եթե պատրաստվի մեկնել Ղրիմ: Ուկրաինակա՞ն, թե՞ ռուսական»: Սա թափանցիկ ակնարկ էր, որ պաշտոնին անցնելուց հետո Միտովին հանելու է ոչ միայն պաշտոնից, այլև ԱԳՆ-ից ու վերցնելու է նրա դիվանագիտական անձնագիրը:

Խորհրդարանական ընտրությունները մեկ անգամ ևս ի ցույց կդնեն նոր միտումները բուլղարական ներքին և արտաքին քաղաքականությունում: Նախամանորյա սոցիոլոգիական հետազոտությունները հետևյալ արդյունքներն են ներկայացնում. ընտրողների ավելի քան 20%-ը այդ օրը կքվեարկի ՔՀԲԵԶ-ի օգտին, մոտ 18%-ը՝ ԲՍԿ-ի, մոտ 10%-ը՝ ՀՄ-ի, մոտ 6%-ը՝ Իրավունքների և ազատությունների շարժման (բուլղարացի թուրքերի և այլ մուսուլմանների կուսակցությունն է), մոտ 5%-ը՝ զիլ տղայի համբավ ունեցող գործարար Վեսելին Մարեշկոյի և մոտ 3,3%-ը՝ աջ պահպանողական ռուսատյաց Ռեֆորմատորական դաշինքի (կազմվել է Բրյուսելից և Վաշինգտոնից ստացվող դոտացիաներով սնվող կուսակցություններից):

Իրավիճակը Բուլղարիայում բավական դինամիկ է զարգանում: Ընտրություններից հետո առաջին ամիսները կարևոր կլինեն երկրի զարգացման համար: Բայց շրջադարձը դեպի Ռուսաստան արդեն իրողություն է, որը ներգրվում է ընդհանուր միտման մեջ. թե՛ ԱՄՆ-ում, թե՛ Նիկարագուայում, թե՛ Մոլդովայում, թե՛ Բուլղարիայում հաղթանակ են տարել Վ.Պուտինի նախագահական թեկնածուները, որքան էլ որ նա ինքը և նրա խոսնակը փորձեն ժխտել դա:

ՊԵՏԱԿԱՆԱԿԵՆՏՐՈՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ ՄԻԱՄՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՑՔ

Վահրամ Հովյան[*]

Պատմական հանգամանքների բերումով հայ ժողովրդի փոքր հատվածն է այսօր բնակվում իր հայրենիքում, իսկ մեծամասնությունը սփռված է աշխարհի տարբեր երկրներում՝ կազմելով հայկական սփյուռքը: Փաստորեն, հայ ժողովուրդը հատվածավորված է Հայաստանում բնակվող և սփյուռքի հայերի միջև: Սփյուռքն իր հերթին չի կազմում մեկ միասնական, կուռ ամբողջություն: Այն կոտորակված է աշխարհի տարբեր երկրներում և տարածաշրջաններում հաստատված հայերի միջև: Այլ չափանիշներով ևս (ըստ կուսակցական պատկանելության, դավանանքի և այլն) Սփյուռքը բաժանվում է տարբեր շերտերի:

Աշխարհի տարբեր վայրերում և տարբեր քաղաքակրթական միջավայրերում բնակվող հայերն աշխարհայացքով, մտածելակերպով, արժեհամակարգով և այլն որոշակիորեն տարբերվում են միմյանցից, և այդ տարբերությունները խորանալու միտում ունեն: Ինքնին վերցրած նման բազմազանությունը բացասական երևույթ չէ: Ընդհակառակը, այն վկայում է հայկական մշակույթի և քաղաքակրթության հարստության ու ինքնատիպության մասին: Սակայն տարբերությունների հետ մեկտեղ յուրաքանչյուր ազգային ընդհանրությանն անհրաժեշտ են նաև միավորող գործոններ (գաղափարներ, սկզբունքներ, արժեքներ, ծրագրեր և այլն): Հակառակ դեպքում վերոնշյալ բազմազանությունը կվերածվի ազգի տարրալուծման և օտար միջավայրերում ուծացման սպառնալիքի:

Ողջ հայությանը միավորող գաղափարների շուրջ

Համարվում է, որ մինչ օրս ողջ հայությանը միավորող միակ գաղափարը եղել է Հայ դատի արդարացի լուծումը: Միայն Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման, հայոց պատմական հայրենիքի վերականգնման գործի շուրջ է պատկերացվում ողջ հայության համախմբումը՝ որ-

[*] «Նորավանք» ԳԿՀ Հայագիտական կենտրոնի ավագ փորձագետ, Գիտական-փորձագիտական խորհրդի քարտուղար:

պես կուռ ամբողջություն: Այս հանգամանքի դրական կողմը թերևս այն է, որ հայությունն իր թիվ մեկ կարևորագույն խնդիրն է համարում Հայ դատի արդարացի լուծումը: Սակայն նման մոտեցումը պարունակում է նաև սպառնալիք այն իմաստով, որ էապես սահմանափակում է հայության միասնականության և անգամ ինքնության հիմնասյուները, ինչպես նաև գործունեության շրջանակները՝ մղելով նրան մարգինալացման[1]: Ուստի, Հայկական հարցի արդարացի լուծման գաղափարի հետ միասին հայ ժողովրդին անհրաժեշտ են նաև ազգը միավորող այլ գաղափարներ ու սկզբունքներ:

Ինչո՞ւ է Հայ դատի արդարացի լուծման ձգտումը ողջ հայությանը միավորող միակ գործոնը: Այս հարցին կարելի է տալ երկու պատասխան.

1. Ինչպես վերը նշվեց, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման, հայոց պահանջատիրության խնդիրները հայության կողմից դիտվում են թիվ մեկ գերակայության խնդիրներ, որոնց համեմատությամբ այլ խնդիրներն ունեն երկրորդական, ոչ էական նշանակություն:
2. Հայկական հարցի արդարացի լուծման գաղափարից բացի չկան (չեն առաջադրվում) ողջ հայությանը միավորող այլ գաղափարներ, ծրագրեր, մոտեցումներ: Այլ կերպ ասած՝ այսօր հոգևոր-տեղեկատվական ասպարեզում առկա է հայկական հանրությունը միավորող գաղափարների՝ վարքագծի սկզբունքների, ապագայի տեսլականների և այլնի պակաս:

Երկրորդ պատճառի առկայությունը եթե ինչ-որ կերպ հիմնավորված էր խորհրդային տարիներին, ապա անկախության պայմաններում այն միանշանակ անթույլատրելի է: Որպես համայն հայությանը միավորող սկզբունք առաջարկում ենք ***պետականակենտրոնության*** գաղափարը:

Պետականակենտրոնության էությունը

Պետականակենտրոնությունը գիտակցության, աշխարհայացքի այնպիսի ձև է, որի առկայության դեպքում պետությունն ընկալվում է որպես բարձրագույն արժեք, նրա շահերը բացարձակ գերակայություն են ստանում այլ (անձնական, խմբակային, կուսակցական և այլն) շահերի նկատմամբ: Պետականակենտրոն մտածողության հիմքում ընկած է այն կանխադրույթը, որ պետու-

[1] Վկան հայ համայնքի լուսանցքային վիճակն էր ԱՄՆ վերջին երկու նախագահական ընտրություններում:

թյան բարօրությամբ պայմանավորված է ողջ հասարակության բարօրությունը: Պետությունը հասարակության բոլոր խավերի ու շերտերի, ինչպես նաև անհատ քաղաքացիների շահերի պաշտպանության գրավականն է հանդիսանում: Հետևաբար, պետական շահերի ոտնահարումը նշանակում է ողջ ազգաբնակչության, հասարակության շահերի ոտնահարում: Ժամանակակից աշխարհում պետությունն է համարվում ազգային անվտանգությունն ապահովող միակ իրական ուժը: Որքան էլ ժամանակակից աշխարհում փորձ արվի նվազեցնել պետության դերը հասարակությունների, ազգերի ու ժողովուրդների կենսագործունեության համար, 21-րդ դարում պետությունները շարունակում են մնալ որպես հասարակությունների ինքնակազմակերպման բարձրագույն ձև և իրականացնել այնպիսի կարևոր գործառույթներ, ինչպիսիք են ռազմական անվտանգության ապահովումը, արտաքին քաղաքականության միջոցով ազգային շահերի պաշտպանությունը, գիտատեխնիկական առաջընթացին, հոգևոր-կրթական զարգացմանը նպաստելը, սոցիալական խնդիրների լուծումը և այլն: Անգամ պետության ապագայի վերաբերյալ մռայլ կամ վատատեսական կարծիքներ ունեցողներն ընդունում են, որ գոնե առաջիկա հարյուրամյակում դրանք պահպանվելու են, իսկ անգամ ամենառոմանտիկ գլոբալիստներն ընդունում են, որ 21-րդ դարում ազգային պետությունները մնալու են որպես միջազգային հարաբերությունների գլխավոր սուբյեկտներ:

Պետականակենտրոնությունը (այլ կերպ՝ նաև հայաստանակենտրոնությունը) հայաստանյան հանրության և Սփյուռքի համար այս պարագայում ոչ թե բարեհունչ ռոմանտիկ արտահայտություն է՝ բարի ցանկությունների ժանրից, այլ խիստ գործնապաշտական սկզբունք նրա գոյության և անվտանգության ապահովման համար:

Պետականակենտրոնությունը ենթադրում է անհատ մարդկանց և ողջ հասարակության գիտակցության ու վարքագծի հետևյալ սկզբունքները.

- *Պետության ընկալում որպես բարձրագույն, սրբազան արժեք:* Պետությունը դիտվում է առաջին հերթին որպես հոգևոր արժեք: Այն նույնացվում է հայրենիքի հետ, համարվում ազգային ինքնության արտահայտություն: Պետության հետ միաժամանակ սրբազան արժեքներ են համարվում նաև նրա այնպիսի հատկանիշները, ինչպիսիք են անկախությունը, ինքնիշխանությունը, ամբողջականությունը և այլն:

- *Պետական շահերի բարձր գիտակցում և գերակայություն:* Պետական շահերը հանդիսանում են հասարակության բոլոր անդամների շահերի խտացված արտահայտությունը[2]: Հետևաբար, այս սկզբունքի առկայության դեպքում հասարակության յուրաքանչյուր անդամ, ելնելով իր իսկ շահերից, խորապես գիտակցում է պետական շահերը և դրանց տալիս գերակա նշանակություն:
- *Բարձր իրավագիտակցություն և օրինապաշտություն:* Հասարակության բոլոր անդամները տեղյակ են երկրում գործող իրավական նորմերի մասին, գիտեն իրենց իրավունքներն ու պարտականությունները և բարեխղճորեն կատարում են դրանք:
- *Հարգանք պետական հաստատությունների նկատմամբ:* Հասարակության բոլոր անդամները հարգանք են տածում պետական կառավարման մարմինների, պաշտոնյաների, ուժային կառույցների, դատական մարմինների և այլ պետական հաստատությունների նկատմամբ:

Հայ իրականության մեջ պետականակենտրոնությունը ենթադրում է հայաստանյան հանրության և Սփյուռքի կողմից հայրենիքի (ՀՀ և ԼՂՀ) ընկալում որպես ազգային բարձրագույն արժեք՝ գերակա մյուս արժեքների նկատմամբ: Իսկ վերջինիս խնդիրների լուծմանը նպաստելը դառնում է համազգային նպատակ: Ներկայում, բացի Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման խնդրից, որպես Հայաստանի առաջ ծառացած հիմնական խնդիրներ, որոնք կարոտ են առաջնահերթ լուծման, կարելի է մատնանշել հետևյալները.

1. Արցախյան հակամարտության արդարացի կարգավորում
2. ՀՀ և ԼՂՀ գիտատեխնոլոգիական զարգացում
3. ՀՀ և ԼՂՀ տնտեսական զարգացում և բնակչության կենսամակարդակի բարձրացում
4. Ժողովրդագրական ճգնաժամի հաղթահարում (արտագաղթի կասեցում, հայրենադարձություն)
5. ՀՀ և ԼՂՀ շրջափակման վերացում:

[2] Այսօր հաճախ պետություն և ազգ տերմինները կիրառվում են որպես հոմանիշներ: Օրինակ՝ Միավորված Ազգերի Կազմակերպություն հասկացությունը նշանակում է միավորված պետությունների կազմակերպություն: Նույն կերպ պետական շահերը հաճախ նույնացվում են ազգային շահերի հետ: Իսկ ազգային շահերն ընդգրկում են ազգի բոլոր ներկայացուցիչների շահերը:

Հայության շրջանում պետականակենտրոնության ձևավորման նախադրյալները

Հայաստանի Հանրապետությունը և Արցախի Հանրապետությունն այն սակավաթիվ պետություններից են, որոնք իրենց էությամբ առավելագույնս համապատասխանում են ազգային պետության իդեալին: Նրանք ունեն ընդգծված ազգային նկարագիր և իրավամբ կարող են դիտվել որպես հայ ժողովրդին պատկանող պետություններ՝ որպես հայ ժողովրդի ինքնակազմակերպման բարձրագույն ձև: Ավելին, ՀՀ-ն և ԼՂՀ-ն ձևավորվել են հայոց պատմական հայրենիքի մի մասի վրա և կարող են դիտվել որպես հայրենիք համայն հայության համար: Այս ամենը լուրջ նախադրյալներ են հանդիսանում, որպեսզի ողջ հայության մեջ ձևավորվի պետականակենտրոն մտածողություն Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության նկատմամբ[3]:

Հայության պետականակենտրոն մտածողության ձևավորման համար կան այլ լուրջ նախադրյալներ ևս: Նախ՝ հայկական մշակույթի ինքնատիպությունն այնքան ակնհայտ է, որ մասնագետներին թույլ է տալիս խոսել հայկական ինքնուրույն (լոկալ) քաղաքակրթության առկայության մասին: Այդ ինքնատիպությունը դրսևորվում է հայոց ծագումնաբանության, լեզվի, գրերի, կրոնի, ճարտարապետության, պարարվեստի և այլնի յուրօրինակության մեջ: Ահա այսպիսի ինքնատիպ մշակույթ (լայն իմաստով՝ հստակ ազգային ինքնություն) ունեցող ժողովուրդների համար է առավել հավանական ազգային պետության նկատմամբ պետականակենտրոն մտածողության ձևավորումը:

Հաջորդ կարևոր նախադրյալը հայոց պետականության մշտական, շարունակական գոյությունն է: Անկախ պետության կորստի պայմաններում էլ մեր ժողովուրդը պահպանել է իր պետականությունը, որի հիմնասյուներն են եղել Հայ Առաքելական եկեղեցին, հայկական իշխանությունները, քաղաքային ինքնավարությունները, զինված ուժերը, հասարակական հարաբերությունները կարգավորող իրավական[4] ու այլ նորմերը և այլն: Հայոց պետականության շարունակականության վկայությունն են նաև պետական մտածողու-

[3] «Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության նկատմամբ» արտահայտությունը շեշտվում է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ բազմաթիվ սփյուռքահայեր աչքի են ընկնում բարձր պետական մտածողությամբ իրենց բնակության վայր հանդիսացող երկրների (Իրան, Ֆրանսիա և այլն) նկատմամբ:

[4] Ուշագրավ է հատկապես արևմտահայերի ներքին կյանքը կարգավորող Ազգային սահմանադրությունը (1963թ.) Օսմանյան կայսրությունում:

թյամբ օժտված ազգային գործիչները, որոնք, անգամ լինելով հակադիր գաղափարախոսական ճամբարներում, գործել են ի շահ ազգի և պետության: Որպես օրինակ կարելի է մատնանշել Գարեգին Նժդեհին և Ալեքսանդր Մյասնիկյանին, որոնք անգնահատելի ավանդ ունեն այժմյան Հայաստանի կայացման գործում, թեև գտնվել են տարբեր քաղաքական ճամբարներում: Գարեգին Նժդեհի շնորհիվ Սյունիքը մնաց Հայաստանի անբաժանելի մասը[5], իսկ Ալեքսանդր Մյասնիկյանը Հայաստանում համախմբեց հայության կարող ուժերին՝ հիմք դնելով մեր երկրի վերելքին:

Այսքանով հանդերձ այսօր ՀՀ-ի նկատմամբ պետականակենտրոնությունն ամուր արմատներ չունի հայության շրջանում: Խոսքը վերաբերում է ոչ միայն սփյուռքահայությանը, այլ նաև բուն Հայաստանի բնակչությանը: Դա արտահայտվում է զանգվածային անօրինականությունների, պետական ինստիտուտների նկատմամբ անհարգալից վերաբերմունքի, անձնական, խմբակային, կուսակցական և այլ շահերը պետական շահերից վեր դասելու և այլնի մեջ:

Հայության մեջ պետականակենտրոն մտածողության արմատավորման համար անհրաժեշտ է երկու պայման.

1. Անհրաժեշտ է ծավալել լուրջ կրթադաստիարակչական աշխատանքներ այս ուղղությամբ: Դեռևս մանկապարտեզից, դպրոցից երեխաների մեջ պետք է սաղմնավորել պետականակենտրոն մտածողություն: Գիտական և կրթադաստիարակչական հիմնարկները, ԶԼՄ-ն, հասարակական կազմակերպությունները, քաղաքական կուսակցությունները Հայաստանում և Սփյուռքում մեծ ջանքեր պետք է գործադրեն հայության մեջ պետականակենտրոնության արմատավորման համար:
2. Պետությունն իսկապես պետք է հանդես գա որպես ողջ ժողովրդի շահերի արտահայտիչ և պաշտպան: Պետական կառավարումը, քաղաքականության մշակումը և իրականացումը պետք է բխեն ողջ հայության շահերից: Առանց այս երկրորդ պայմանի՝ միայն առաջին պայմանի առկայությամբ գրեթե անհնար կլինի հայության շրջանում պետականակենտրոն մտածողության ձևավորումը:

Այս պայմանների ապահովման դեպքում պետականակենտրոն մտածողությունն աստիճանաբար կարող է դառնալ հայկական մշակույթի կարևոր

[5] Ինչը չափազանց կարևոր նշանակություն ունի ՀՀ ազգային անվտանգության համար:

բաղադրիչներից մեկը՝ նպաստելով ազգի համախմբմանն (կոնսոլիդացիա) ու ազգային ինքնագիտակցության վերելքին:

Ամփոփում

Պետականակենտրոնության սկզբունքը, դառնալով հայոց ազգային-քաղաքական մշակույթի բաղկացուցիչ մասը, կունենա առնվազն երկու դրական հետևանք.

1. կնպաստի հայության համախմբմանը,
2. կնպաստի Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության հզորացմանը, քանի որ վերջիններս կդառնան ողջ հայ ժողովրդի հոգածության առարկա:

ՉԱԽՈՂՎԱԾ ԵՐԿՐՆԵՐԻ ԻՆԴԵՔՍԸ 2010-2016ԹԹ.

Հարավային Կովկաս. կրիտիկական ենթակառուցվածքներ

Կարեն Վերանյան*

«Ֆորին Փոլիսի Մեգեզին» ամսագրի (*Foreign Policy Magazine*) և *«Ֆանդ ֆոր Փիս»* կազմակերպության (*The Fund for Peace*) նախաձեռնած «Չախողված երկրների ինդեքսը» (*Fragile States Index*) վարկանիշային նախագծում կիրառված մեթոդաբանությունը հիմնվում է 12 ենթացուցիչների հաշվարկի վրա: Այդ ենթացուցիչներն իրենց հերթին ներառվում են երեք հիմնական խմբերում՝ սոցիալական, տնտեսական, քաղաքական և ռազմական: Յուրաքանչյուր ենթացուցչի համար ընտրված վարկանիշային թիվը դասակարգված է 0-10 թվային սանդղակով, որտեղ 10 թիվը համարվում է բարձրագույն բացասական կետը, 0 թիվը՝ ցածրագույն լավագույն կետը: Որքան ցածր է տվյալ երկրի ամփոփ վարկանիշային միավորը, այնքան տվյալ պետությունը կայացած է:

Սոցիալական բաղադրիչ

1. Ժողովրդագրական խնդիրներ (բնական աղետ, համաճարակ, շրջակա միջավայր, մահացության տոկոս, բնակչության աճ, օդի աղտոտվածություն)
2. Ներքին տեղահանվածներ և փախստականներ (տեղահանում, ճամբարներ, փախստականների թիվը մեկ շնչի հաշվարկով, ինտեգրման կարողությունները)
3. Ճնշումներ զանգվածների/խմբերի նկատմամբ (խտրականություն, էթնիկ, համայնքային, կրոնական բռնություն)
4. Մարդկային կապիտալի, ուղեղների արտահոսք (արտագաղթ, մարդկային կապիտալ, ուսյալ հատվածի արտագաղթ):

---

* «Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի ղեկավար:

Տնտեսական բաղադրիչ

5. Անհավասար տնտեսական զարգացում (*GINI* գործակից, ծառայությունների բաշխումն ըստ քաղաքների և գյուղերի, եկամուտների հաշվարկը)
6. Աղքատություն և տնտեսական անկում (կառավարության պարտք, գործազրկություն, երիտասարդության գործազրկություն, ՀՆԱ)

Քաղաքական և ռազմական բաղադրիչ

7. Պետության լեգիտիմություն (կոռուպցիա, քաղաքական մասնակցություն, ընտրական գործընթաց, ժողովրդավարության պակաս, ապստամբություններ)
8. Հանրային ծառայություններ (էլեկտրաէներգիայի, ինտերնետի հասանելիություն, առողջապահական ծառայություններ և այլն)
9. Մարդու իրավունքներ և օրենքի գերակայություն
10. Անվտանգության համակարգ (ներքին կոնֆլիկտ, փոքր զինատեսակների տարածում, ռազմական հեղաշրջում, քաղբանտարկյալներ, ռազմատենչություն, ապստամբությունների ակտիվություն)
11. Վերնախավեր (իշխանության համար պայքար, քաղաքական մրցակցություն, կեղծ ընտրություններ)
12. Արտաքին միջամտություն (արտաքին օգնություն, խաղաղապահների առկայություն, ՄԱԿ առաքելության ներկայություն, արտաքին ռազմական միջամտություն):

Հայաստան, Ադրբեջան, Վրաստան. 2010-2016թթ. ամփոփ արդյունքները

Առանձնացված երկրների տարեկան ցուցանիշները գրեթե նույն դինամիկան են ունեցել: Չնայած հարավկովկասյան հանրապետություններն այսօր գտնվում են տարածաշրջանային և միջազգային տարբեր քաղաքական-տնտեսական ինտեգրացիոն գոտիներում (իհարկե, ինտեգրման գործընթացները նոր են սկսում դառնալ առարկայական), այնուհանդերձ, զարգացման գրեթե միանման տրամաբանություն ունեն: Ամփոփ ցուցանիշները համադրելի են հատկապես Վրաստանի և Ադրբեջանի պարագայում: 2010-2016թթ. երեք երկրներից ամփոփ միավորների հաշվարկով առավել շեշտակի դրական միտում արձանագրել է Վրաստանը, ինչը երևում է *Գծապատկեր 1*-ից: Այդ միտումը

շոշափելի է նաև Ադրբեջանի վարկանիշային ամփոփ միավորների հաշվարկում, իսկ Հայաստանի 2010թ. և 2016թ. ամփոփ միավորների միջև թվային տարբերությունը համեմատաբար քիչ է արտահայտված: 2010-2016թթ. Հայաստանի և Ադրբեջանի ամփոփ ցուցանիշներում արձանագրված ամենամեծ թվային տարբերությունը նկատվել է 2010թ.: Դա առավել վառ արտահայտված է նաև նույն թվականի Հայաստանի և Վրաստանի ամփոփ ցուցանիշների համադրությունում: Հարավային Կովկասի երկրների 2010թ. ամփոփ ցուցանիշների ցածր արդյունքներում արտացոլվում են 2008-2009թթ. համաշխարհային ֆինանսավարկային ճգնաժամի հետևանքները: Ճգնաժամի նկատմամբ առավել զգայուն էին Վրաստանի և Ադրբեջանի տնտեսությունները. Վրաստանի տնտեսությունը զգալիորեն կախված է արևմտյան ֆինանսավարկային ներհոսքից ու ներդրումներից, որոնք համաշխարհային ճգնաժամի հետևանքով էապես կրճատվել են:

Գծապատկեր 1

Հայաստան, Ադրբեջան, Վրաստան. 2010-2016թթ. ամփոփ արդյունքները



Գծապատկերը կազմվել է fundforpeace.org աղբյուրի վիճակագրական տեղեկատվության հիման վրա:

Ճգնաժամը շոշափելի հետևանքներ ունեցավ Ադրբեջանի նավթային եկամուտների վրա՝ պայմանավորված երկրի նավթագազային ոլորտում արևմտյան ֆինանսական ներդրումների կրճատումներով: Համաշխարհային ճգնաժամը չշրջանցեց Հայաստանի տնտեսությունը, ինչի արդյունքում էապես կրճատվեց ռուսաստանյան ֆինանսական ներհոսքը, դանդաղեցին տնտեսության աճի տեմպերը:

Անդրադառնանք երկրների այն ենթացուցիչների համեմատական վերլուծությանը, որոնք տվյալ պետության համար ունեն կրիտիկական նշանակություն: 3-րդ՝ *ճնշումներ խմբերի/զանգվածների նկատմամբ* ենթացուցչով, ի տարբերություն Ադրբեջանի ու Վրաստանի, Հայաստանի վարկանիշային ցուցանիշն անհամեմատ դրական է: Չնայած Հայաստանը մոնոէթնիկ պետություն է, այնուհանդերձ, արժեքային ընկալումների տեսանկյունից բավական հանդուրժող է երկրում բնակվող ազգային փոքրամասնությունների նկատմամբ: Վրաստանի ենթացուցչում թերևս հաշվարկվել է հակամարտությունն Աբխազիայի և Հարավային Օսիայի հետ (նաև 2008թ. վրաց-օսական ռազմական գործողությունները): Այդքանով հանդերձ, Վրաստանում էթնիկ փոքրամասնությունների նկատմամբ հանդուրժողականության ընկալումները բավական դրական են (օրինակ՝ թիֆլիսահայության ինտեգրումը):

Գծապատկեր 2

2010թ. Հարավային Կովկասի երկրների ենթացուցիչների համեմատականը



Գծապատկերը կազմվել է fundforpeace.org աղբյուրի վիճակագրական տեղեկատվության հիման վրա:

Օբյեկտիվ գնահատականներով, Ադրբեջանի դեպքում իրավիճակը լրիվ այլ է: Երկրի քաղաքական դաշտում գերակշռում են հայերի հետ անհամատեղելիության մոտեցումները, նույն վերաբերմունքն առկա է նաև թալիշների և այլ էթնիկ փոքրամասնությունների հանդեպ: Իհարկե, այս դիրքորոշումները չեն արտացոլում հասարակության ողջ սպեկտրը, այնուհանդերձ, գտնվելով ղեկավարության մշտական տեղեկատվական արտահոսքի ներքո՝ ընդլայն-

ման միտում ունեն: Ի տարբերություն վրաց-հարավօսական, աբխազական հակամարտությունների, որոնք Վրաստանի հասարակական ընկալումներում գլխավորապես ունեն ավելի շատ քաղաքական, քան էթնիկ ենթատեքստ, ներկայացվում են որպես հակամարտություն ՌԴ ու Վրաստանի միջև, արցախյան հակամարտության առումով Ադրբեջանի քաղաքական, հասարակական ընկալումները կրում են էթնիկ-ազգայնական բնույթ:

4-րդ ենթացուցիչը վերաբերում է *մարդկային կապիտալի և գիտական պոտենցիալի արտահոսքին:* Այս ենթացուցչով 2010թ. Հայաստանն, ի տարբերություն հարևան երկրների, ունեցել է լուրջ հետընթաց, որը պայմանավորված է մի քանի գործոններով: Նախ՝ երկու հարևան երկրների կողմից Հայաստանի քաղաքական-տնտեսական շրջափակումն էական ազդեցություն է թողնում հասարակության բարեկեցության մակարդակի վրա: Սա իր հերթին հասարակությունում ձևավորում է բարոյահոգեբանական մի մթնոլորտ, որը նպաստում է երկրից մարդկային կապիտալի կանոնավոր արտահոսքին: Բացի այդ, մեր հասարակությունում բավական տարածված են սոցիալ-տնտեսական վիճակից անբավարարվածության, անհատապաշտական, «յուրաքանչյուրս նախագահ է» արժեքային ընկալումները, որոնք ևս ազդեցություն ունեն Հայաստանից արտագաղթի վրա՝ այլ երկրներում առավել բարեկեցիկ պայմաններ գտնելու ակնկալիքով: Ի տարբերություն Հայաստանի, Ադրբեջանն ու Վրաստանը, լինելով տարանցիկ, դեպի ծով մուտք ունեցող երկրներ, նպաստել են հասարակությունների արժեքային-հոգեբանական ընկալումներում իրենց երկրների՝ տարածաշրջանային ու միջազգային ինտեգրվածության վերաբերյալ պատկերացումների բյուրեղացմանը: Թեև 2010-2016թթ. Հայաստանն իր ամփոփ ցուցանիշով գերազանցում է հարևաններին, սակայն 4-րդ կետով Հայաստանի արձանագրած հետընթացը երկրի անվտանգության համար *կրիտիկական կետ* է: Մարդկային կապիտալի և հատկապես «ուղեղների» արտահոսքը, որը կրում է շարունակական բնույթ և ունի խորացման միտում, կարող է աղետաբեր լինել առանց այդ էլ սոցիալ-տնտեսական խնդիրներ ունեցող և ժողովրդագրական տեսանկյունից ոչ այնքան բարվոք այնպիսի երկրի համար, ինչպիսին է Հայաստանը:

Հայաստանի «ուղեղների» արտահոսքի ցուցանիշն ուղղակիորեն պայմանավորված է 6-րդ՝ *աղքատություն և տնտեսական անկում* ենթացուցչի

տվյալներով: Թեև 2010թ. Հայաստանի 6-րդ ենթացուցիչն առաջատար է հարևան երկրներից, այնուհանդերձ, արդեն 2012թ. Ադրբեջանը գերազանցել է մեզ, 2013թ. այդ միտումներն էլ ավելի են շեշտադրվել: Բերենք մի քանի վիճակագրական տվյալներ. Արժույթի միջազգային հիմնադրամի տվյալներով, 2015թ. Ադրբեջանի ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվարկով ($18.000) անհամեմատ գերազանցում է հարևան երկրներին (Հայաստանի ու Վրաստանի ցուցանիշները՝ համապատասխանաբար $8.500 և $9.600): 2010-2014թթ. Ադրբեջանի ՀՆԱ-ն ունեցել է կայուն և կտրուկ զարգացման դինամիկա՝ պայմանավորված նավթի համաշխարհային գների բարձրացման միտումներով: Աշխատանքի միջազգային կազմակերպության վիճակագրությամբ, 2015թ. Հայաստանում գործազրկությունը կազմել է 18.5%, Ադրբեջանում՝ 5.3%, իսկ Վրաստանում՝ 12%: Ինչպես տեսնում ենք գրաֆիկական գծապատկերից, 8-րդ՝ *հանրային ծառայություններ* ենթացուցչով 2013թ. Հայաստանի վարկանիշը լավագույն արդյունքն է արձանագրել երկրի մնացյալ ենթացուցիչների հաշվարկում: Ունենալով մակրոտնտեսական լուրջ խնդիրներ՝ էական բարելավում է ապահովվել հանրային ու սպասարկման ծառայությունների ոլորտներում, որոնք չունեն կրիտիկական նշանակություն երկրի տնտեսական կամ քաղաքական անվտանգության համատեքստում:

Գծապատկեր 3

Հարավային Կովկաս.
2013թ. երկրների ենթացուցիչների համեմատականը



Գծապատկերը կազմվել է fundforpeace.org աղբյուրի վիճակագրական տեղեկատվության հիման վրա:

Քաղաքական և ռազմական բաղադրիչով Հայաստանի ենթացուցիչները գերազանցում են հարևաններին: 7-րդ՝ *պետության լեգիտիմություն (կոռուպցիա, քաղաքական մասնակցություն, ընտրական գործընթաց, ժողովրդավարության պակաս, ապստամբություններ)* ենթացուցչով Հայաստանն անհամեմատ բարձր է հարևաններից: Ադրբեջանի պետական կառավարման համակարգի, երկրում ժողովրդավարական ինստիտուտների ձևավորման գործընթացում առկա լրջագույն խախտումների մասին բազմիցս են բարձրաձայնել Արևմուտքում: Լինելով ավտորիտար պետություն՝ Ադրբեջանի քաղաքական վերնախավը հասարակությունը պահում է կաղապարված, վերահսկելի, այս գործոնի վրա ազդում է նաև իսլամը: 10-րդ՝ *անվտանգության համակարգ (ներքին կոնֆլիկտ, փոքր զինատեսակների տարածում, ռազմական հեղաշրջում, քաղբանտարկյալներ, ռազմատենչություն, ապստամբությունների ակտիվություն)* ենթացուցչով Հայաստանը կրկին անհամեմատ առաջ է հարևան երկու երկրների ցուցանիշներից: Ադրբեջանը տարբեր ահաբեկչական խմբավորումների համար շարունակում է հանդիսանալ տարանցիկ երկիր, հատկապես Հյուսիսային Կովկասից ներթափանցող ահաբեկչական խմբավորումներն անարգել հատում են ադրբեջանական սահմանը, տեղափոխվում Թուրքիա: Նույնը կարելի է ասել նաև Վրաստանի մասով՝ Պանկիսի կիրճի հետ կապված: Մեկ անգամ չէ, որ խոսվել է սիրիական և իրաքյան ահաբեկչական գործողություններին վրացի և ադրբեջանցի ահաբեկիչների մասնակցության մասին:

2013թ. զեկույցի տվյալներով, 12-րդ՝ *արտաքին միջամտություն (արտաքին օգնություն, խաղաղապահների առկայություն, ՄԱԿ առաքելության ներկայություն, արտաքին ռազմական միջամտություն)* ենթացուցչով մեր երկիրը թեև գերազանցել է երկու հարևան հանրապետություններին, սակայն 2014-2015թթ. Ադրբեջանի և Հայաստանի արդյունքները գրեթե համընկնում են, իսկ արդեն 2016թ. Հայաստանը սկսել է զիջել Ադրբեջանին: Հայաստանի ենթացուցչի բացասական միտումը, ըստ էության, զեկույցի փորձագիտական խմբի կողմից սուբյեկտիվ գնահատականի արդյունք է և քաղաքականացված է՝ պայմանավորված Մաքսային միությանը Հայաստանի անդամակցման մասին 2013թ. սեպտեմբերի 3-ի հայտարարությամբ և այդ ուղղությամբ հետագա գործընթացներով:

Գծապատկեր 4

Հայաստան, Ադրբեջան, Վրաստան.
2016թ. երկրների ենթացուցիչների համեմատականը



Գծապատկերը կազմվել է fundforpeace.org աղբյուրի
վիճակագրական տեղեկատվության հիման վրա:

Վիճակագրությունը ցույց է տալիս, որ 2013թ. և 2016թ. տվյալներով, Հայաստանն էական ուշադրություն է դարձրել 1-ին՝ *բնական աղետների հաղթահարման, շրջակա միջավայրի պահպանության* և 8-րդ՝ *հանրային ծառայությունների* բարելավման հարցերին, որոնք և հանդիսացել են Հայաստանի լավագույն ենթացուցիչները: 2013թ. և 2016թ. Ադրբեջանն էապես բարելավել է այնպիսի կարևոր ոլորտ, ինչպիսին է *մարդկային կապիտալի արտահոսքի* և *տնտեսության անկման զսպումը*: Տնտեսության անկումն ու «ուղեղների» արտահոսքը մեր երկրի համար ունեն կրիտիկական նշանակություն և ենթադրում են խորքային բարեփոխումներ այս ուղղությամբ: Համեմատության համար նշենք, որ ԱՄՆ ԿՀՎ 2015թ. տվյալներով, Հայաստանի պետական պարտքը կազմել է երկրի ՀՆԱ 47,5%-ը, իսկ Ադրբեջանի համապատասխան ցուցանիշը՝ երկրի ՀՆԱ ընդամենը 11,8%-ը (Վրաստանի ցուցանիշը՝ ՀՆԱ-ի 38,8%-ը)[1]:

Ադրբեջանի պարագայում կրիտիկական կետ կարող է հանդիսանալ *ճնշումներ խմբերի/զանգվածների վրա* ենթացուցիչը՝ պայմանավորված երկրի ղեկավարության կողմից ազգային փոքրամասնությունների նկատմամբ

[1] http://total-rating.ru/1601-gosudarstvennyy-dolg-stran-na-2015-god.html

անհանդուրժող մոտեցումներով, որոնք մեկ անգամ չէ, որ հանգեցրել են ազգային հողի վրա բախումների և միջադեպերի: Ադրբեջանի դեպքում կրիտիկական է համարվում նաև 7-րդ՝ *պետության լեգիտիմության* ենթացուցիչը, որը 2016թ. զեկույցում ցածրագույն արդյունքն է ունեցել երկրի բոլոր ենթացուցիչների համադրությամբ: Նավթի համաշխարհային գների ներկա անկման միտումները, երկրի քաղաքական վերնախավում առկա կոռուպցիայի բարձր մակարդակի պայմաններում, ի հավելումն՝ 2016թ. նոյեմբերի վերջին Ադրբեջանում բնական գազի և էլեկտրաէներգիայի սակագների բարձրացումներն ամենևին էլ չեն բացառում երկրում հասարակական լուրջ դժգոհությունների ալիքի բռնկումը:

Կրիտիկական ենթակառուցվածքների համատեքստում խոցելի է նաև Ադրբեջանի 10-րդ՝ *անվտանգության համակարգի* ենթացուցիչը, որտեղ թեև երկիրն ըստ զեկույցի ունեցել է որոշակի բարելավում, սակայն ներքին հակամարտությունների, փոքր զինատեսակների ապօրինի շրջանառության (հատկապես ահաբեկչական խմբավորումների և ծայրահեղականների մասով), ռազմատենչության ակտիվացման հարցերի տեսանկյունից իսկապես հիմնախնդիրները մնում են ակտուալ:

Կրիտիկական է նաև 12-րդ՝ *արտաքին միջամտություն* ենթացուցիչը, հատկապես դրա «ռազմական միջամտության» բաղադրիչը, որն ուղղակիորեն վերաբերում է Ադրբեջանի ազգային անվտանգության հարցերին, քանի որ երկրի ղեկավարության որդեգրած ռազմատենչությունը, սպառազինությունների ձեռքբերման կտրուկ աճը կարող են հանգեցնել Արցախի և Հայաստանի ուղղությամբ ռազմական գործողությունների վերսկսմանը և արդյունքում՝ մեր համարժեք գործողությունների նախաձեռնմանը:

Հուշագիր հեղինակին

«Գլոբուս» վերլուծական հանդեսը հրապարակում է վերլուծական բնույթի հոդվածներ՝ նվիրված Հայաստանի և Հայության ռազմաքաղաքական, տեղեկատվական և վերջինիս մեջ ընդգրկված քաղաքակրթական ու հոգևոր անվտանգության խնդիրներին, հայկական համայնքների և տարալեզու-տարադավան հայերի կազմակերպչական անվտանգության հիմնահարցերին:

«Գլոբուս» ամսագրի խմբագրական խորհրդի կողմից *պատվիրված* նյութերը հանդիսանում են «Նորավանք» ԳԿՀ-ի սեփականությունը: Ձեռագրերը գրախոսվում են: «Գլոբուս» հանդեսի հրապարակումները արտահայտում են հեղինակների տեսակետները:

Հոդվածների ներկայացման ձևը

1. Հոդվածները ներկայացվում են տպագիր և համակարգչային շարվածքով (*MS WORD* ծրագրով), «*Sylfaen»* տառատեսակով, 11 տառաչափով (ֆոնտով), ծավալը չպետք է գերազանցի 7 էջը:
2. Առաջին անգամ հոդված ներկայացնելիս պարտադիր կցել հեղինակի ինքնակենսագրությունը *(CV)*:
3. Էջը պետք է համապատասխանի A4 չափին, լուսանցքները ձախից, աջից, վերևից ու ներքևից՝ 2 սմ: Տողերի միջև հեռավորությունը՝ 1.5:
4. Ինտերնետային աղբյուրների հղումները նշել տողատակում:

Խմբագրություն

«ԳԼՈԲՈՒՍ» ամսագիր
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ globus@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 19.01.2017թ.
Թիվ 1 (80), 2017թ.
Տպաքանակը՝ 150։

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70x100 1/16
Պայմանական 4 մամուլ։ Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «ԹԱՍԿ» ՍՊԸ տպարանում